



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material









ՊՐՈՖ. Մ. ԱԲԵԼՅԱՆ

**ՀԱՅՈՑ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՌԱԿՆԵՐՆ ՅԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՆՐԱՆՑ ՄԵԶ**

(ԱՐՏԱՏՊՎԱԾ Ե ԶԱՆԷ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ
J ՀԱՏՈՐԻՑ)

ՅԵՐԵՎԱՆ 1985



6

2 May.

1961-1962 to 1961 P.

658

6642

11502
II



1880

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

1880

Յերբ մի տարի առաջ*) այստեղ Վ. Բրյուսովի դասախոսության ժամանակ ռուսերեն լեզվով կարդացվեց Ֆրիկի «Գանդատը», շատերը դարձանում էին, թե միթե այդքան վաղ, 13-րդ դարի վերջում կամ 14-րդ դարի սկզբում (յերբ դեռում էին Ֆրիկին), կարող եր մեղեքում առաջ դալ այնպիսի աղատախոս բանաստեղծութունն ազգերի և դասակարգերի և առհասարակ սոցիալական անհավասարությունների մասին: Դրա համար և վճարում, Յերիկին ավելի ուշ ժամանակի յերգիչ էին համարում: Թե 13-րդ դարում, յերբ աղբիւ և Ֆրիկը, իսկապես կարող եր հայերի մեջ այդպիսի բանաստեղծութունն զոյութունն ունենալ, այդ շատ պարզ տեսնում ենք իրական կյանքի այն պատկերից, վոր զծագրված է մեր հին առակների մեջ, վոր ինչպես ուրիշ յերկրներում, նույնպես և մեղեքում 12 և 13-րդ դարերում առանձնապես սիրում և մշակում էին:

Բայց նախ, թե յերբ և ինչպես և առաջացել առակների գրականությունը մեր մեջ, կամ առակները Հայոց գրականության առաջին շրջանում:

Ինչպես մեր ամբողջ հին գրականությունը, նույնպես և առակները տեսակը ծագում է մեղեքում վոչ թե ազգային հողի վրա ժողովրդականի մշակությամբ, այլ թարգմանությամբ:

Ն. Մալը**), — վորի սիրով կատարած յերկարամյա հետազոտությանն և արժանացել մեր հին գրականության այս ճյուղն և վորի շնորհիվ շատ բանասիրական խնդիրներ պարզված են և ունենեք Վարդանայ առակների մեծ խնամքով պատրաստված մի ժողովածու. — ցույց է տալիս, վոր թեպետ և Նզդուսի առեւը չի հիշատակվում հայոց հին գրականության մեջ, բայց հայերը հնուց անտի ծանոթ են յեղել նրա առակներին, վորոնցից վաթսուներից ավելի թարգմանած ունենք գրաբար լեզվով և ուրիշ մի քանիսը հիշատակվում են մեր հին մատենագիրների մեջ: Բացի այդ՝ 7-րդ դարում հավանորեն ճարտասանության կամ քերթողական արվեստի գրքերից

*) Այս հոդվածը ազգագրում է 1917 թ. Թիֆլիսում՝ Հայ Գրողների Ընկերության հրապարակային կոնֆերանսում իմ կարդացած դասախոսութունից վորոշ կրճատ. մեծությի և համեմատությի ՀՍԽՀ Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի ցանկությամբ ավելացրած են առակների բնագրերը (վոր յես առաջ կարդացել եմ դրքերից), ու զրա հետեանքով կատարված են մի քանի փոփոխություն: Նույն նյութի մասին տարիներ առաջ մի քանի անգամ կարդացել եմ ՆՊՊՊՊՊՊ, ճեմարանում հայոց գրականության դասընթացի մեջ, այլ և հետադարձ՝ Յերեանի Պետ. Համալսարանում: Մ. Ա.

**) Н. Малин. «Сборники притч Веракина», ч. I, исследование. СПб. 1899. Նույնի, Ժողովածույ առակաց Վարդանայ, մասն Բ., բնագիր, ՍՊ. ԹՅԵԴ. Նույնի, գ. II, приложение С. 1894.

թարգմանվում են Ուլիմպիանոս առակաները, վոր Եզոպոսի առականերից են հռետորական խմբադրությամբ. այդ առակաները ըստ Ն. Մառի, թվով տասնութինք են յեղել, վորոնց վրա հետադայում ավելացել են նաև ուրիշները և դարձել են քսան և յերեք: Հավանորեն 6—7-րդ դարում թարգմանվում են նաև «ԲԱՊՏԱՍԱՍՈՍ» (Ֆիզիոլոգ) կոչված գիրքը, վորի հեղինակը հայտնի չէ և վորի մեջ խոսվում է կենդանիների «բարոյքի», այսինքն բարքերի, բնավորության մասին: Այդ գրքին ծանոթ են յերևում Եռլինսկ մեր կլասիկ հեղինակները՝ Ագաթանգեղոս, Եղիկ Կողբացի և ուրիշները: «Բարոյախօսն» և Եզոպոսի առակաները, Ուլիմպիանոսի անունով, չափ սերված են յեղել հնում հայ հեղինակներից: Հատ-հատ ուրիշ առականեր ևս հիշատակում են մեր հին հեղինակները:

Գրիգոր Մագիստրոսի նամակներից յերևում է, վոր 11-րդ դարում դպրոցներում աշակերտներին քերականության և ճարտասանության հետ սովորեցնում էին նաև «առասպելավարժություն», այսինքն աշակերտներին գրել, անգիր անել և մեկնել էյին տալիս առական, վոր և մի շատ հարմար վարժություն է յեղել ապագա մեկնաբաններ պատրաստելու համար: Առականի հայկական ժողովածուներ, սակայն, հայտնի չեն, իսկ ժողովրդական առակաները մշակելու և նրանցից ժողովածուներ կազմելու մասին՝ մտածել անգամ կարելի չէ մինչև 11-րդ դարու կեսերը և ավելի ևս ուշ: Ժողովրդական առակաները, վորոնցից մի քանիսը մեջ են բերում հին հեղինակները, նույն բախտն են ունեցել, ինչ վոր մեր հին ժողովրդական բանահյուսությունն ընդհանրապես: Դրա պատճառն այն է, վոր գրականությունը դեռ յեկեղեցականների ձեռին եր. իսկ յեկեղեցականը, ինչպես հայտնի չէ, իր կոչումով արդեն ընդունակ չէր զարգացնելու բազմակողմանի գրականություն, մշակելու թեկուզ մի խոնարհ գրական տեսակ, ինչպիսին առականն են: Դրանք մեր գրագետ յեկեղեցականի կողմից վոչ միայն արհամարհված են յեղել իրրե գեղջկական, ուստի և անարժեք բաներ, այլ և իրենց աշխարհիկ բնավորության պատճառով հալածված: Ձանադան տեսակի գուշակություն անողների հետ, ինչպես են՝ «հաւահմայք», «հացահմայք», «հատահացք». մերժված և հաղորդության անարժան են համարվել նաև «ղրախա. սք», «ղրատեսք», շրջողք տանելի տուն, հետաքրքրք, առասպելախաւսք»): Վերջինը վերաբերում է առակախոսներին. հայերեն «առասպել» բառը, բացի իր իսկական նշանակությունից, գործածվում է նաև իրրե առակ, ինչպես վոր սույն կրկին նշանակություններն ունեն համապատասխան հունարեն *mythos*, լատիներեն *fabula* բառերը: Ուրիշ Պոյր դրում է հաճախ «խրատել առակ», «յանդիմանել առակ» և այլն, «Ողոմպիանոս առականերից» 3-րդի խրատական մասն սկսվում է «խրատել առասպել»:

Այսպես ուրեմն հնում հալածված են յեղել ինչպես գուշանները և ուրիշները, այնպես և առասպելախոսները, այսինքն առակախոսները:

*) Տե՛ս՝ Н. Марр, «Сборники притч Вардана», ч. I, Երևն 289. Ժան. մի ձեռագրի նկարագրի մեջ:

Բայց և այնպես կյանքը կանգ չի առնում: 10-րդ դարուց ի վեր ավատական շրջանի յերեք վիճակներէ՝ ազնվականութեան, հոգևորականութեան և շինականութեան կողքէն տնտեսական ու մտավորական բարձրանում և քաղաքացութեանը: Բարձրատունաց իշխանութեան յերկրորդ շրջանի հարյուրամյա խաղաղութեան ժամանակ և հետո Հայաստանում զարգանում ու ծաղկում են վաճառաշահ քաղաքները. բարդավաճում են յերկրի արտադրողական ուժերը, արհեստներն ու արդյունադործութեանը: Շահաստանները, ինչպես՝ Անի, Արծն և ուրիշները, մեծ առևտուր ունեւէին արեւելիքի և արեւմուտքի հետ: «Ծով և ցամաք երկն՝ ր և առատանայր կրել ի սմա զզօրութիւն իւր», ասում է Ա. Լաստիվերտցին իր հայրենական Արծն քաղաքի համար. «բարեացն առատութեամբ պսակեալ», «վաճառականք փառաւորք»: «Երբև ակն մի պատուական՝ լուսազեղ պայծառութեամբ փայլէր քաղաքս մեր ի մէջ ամենայն քաղաքաց, ամենեկն զեղեցիկ, բոլորովին զարգարունս: Այսպես և Անին և ուրիշները: Ինչպէս արար առաջ և գալիս դրամական տնտեսութեան. արծաթը յարդի եղև», ասում է Լաստիվերտցին, և այս վոչ միայն քաղաքներում ապրող հոգատեր ազնվականների ու վաճառական քաղաքացիների համար, այլ և հոգևորականների: Դրամը մի նոր աստված եր զարձիկ. մարդիկ շահի յետևից ելին ընկնում: Նրանց հարստութեան աղբյուրը կազմում եր, սակայն, վոչ միայն առևտուրն ու արդյունադործութեանը, այլ և աշխատավորների շահագործումը: Բուրժուազիան շահագործում եր մանր արհեստավորներին: Հողերը կենտրոնանում ելին աշխարհական և հոգևորական իշխանավորների և վանականների ձեռին, վորոնց տնտեսութեան հիմքը կազմում եր յերկրագործութեանն ու շինականների հարստահարութեանը, թեկուզ և կային «հողագործ իշխաններ» և վաճառականներ, վորոնք իրենք անձամբ ելին մշակութուն աւելում:

Այս տնտեսական-սոցիալական հարաբերութեաններին հետևանքով տեղի չի ունենում ճնշող և ճնշված դասակարգերի միջև մի սուր պայքար, վոր արտահայտված է առակների մեջ: Մինչ մի կողմից աշխատավորութեանը գլուղում ու քաղաքում շատ նեղ դրութեան մեջ եր, մյուս կողմից մարդիկ փարթամացած, լինին աշխարհական թե յեկեղեցական, սկսում են ուրախ-զվարթ, ճոխ կյանք վաւել հակառակ հին ճգնավորական խրատակեցութեանը: Հոգին, հոգևորը, վոր զեռ գերելիսող եր 10-րդ դարի յերկրորդ կեսին, յետ է մղվում, և առավելութուն է տրվում մարմնին, մարմնավորին: Կրօնի մեջ դա արտահայտութեան է դառնում Թոնդրակեցոց աղանդով, վոր Յեկեղեցու հակառակ մի ուսում եր:

Քաղաքների այս տնտեսական և մտավոր զարգացումը 11-րդ դարի յերկրորդ յնուրդում, արդարև, կանգ է առնում վորոշ կողմերում և նույնիսկ յետ է մղվում Սելջուկյան թուրքերի ավերածութեանների հետևանքով. բայց Մելիք-Շահին թագավորելուց ի վեր (1072—1092) յերկիրը խաղաղում է

և, բաժանված մահմեդական ու քրիստոնյա տիրապետների ձեռքին, նորից բարգավաճում է մինչև թաթարների արշավանքները, 13-րդ դարի կեսերը: Հարուստ քաղաքացիներն առանձին դերք ձեռք բերելով՝ իրենց ուրախ կյանքի համեմատ և համար՝ իրենց արվեստի և գրականության պահանջն են ունենում: Հին գուսաններն ու գուսանական յերգերը, վոր մի ժամանակ ազնվականների ուրախության միջոցներն էին, այժմ ծառայում են նաև ճոխ քաղաքացիներին, վորոնք սիրում են յերգ ու յերաժշտություն և պար^{*)}:

Քաղաքացությունն ազդում է և հոգևորականության վրա: Գրականությունն և ուսումը դեռ յեկեղեցականի ձեռքին էին. բայց նա այժմ և հետո ստիպված էր բավարարել բարձրացած քաղաքացությանը: Ուստի 11-րդ դարի կեսերից՝ առաջ է գալիս քաղաքացիական գրականություն: Հոգևորականի համար այլևս անպատշաճ չի համարվում, թեկուզ վողբի ձևով, յերգել աշխարհային կյանքի բարեքները և յերկրի, առանձնապես քաղաքների, ծաղկումն ու ամբողջումը: Նա սկսում է քաղաքացիների համար մշակել նաև նոր գրական տեսակներ՝ բժշկական, իրավաբանական և այլն. հորինում է ուսուցական քերթվածներ: Ապա 12-րդ դարուց սկսած հոգևորականությունը մշակում է նաև առակներ^{**)}: Յեկեղեցականի իր կոչումով ուսուցիչ էր, վարժ մեկնաբանությունների մեջ գործադրվող այլաբանական ձևին. նա ամեն առաջապելի մեջ էլ տեսնում էր այլաբանություն, ուստի բնական է, վոր նա սիրեր խրատական այլաբանությունը: Ենթ սիրելով այդ, վերջ ի վերջո պիտի սկսեր ժողովել և մշակել ամեն տեսակի այլաբանական պատմվածքներ, խնայպես ամեն տեսակի պատմվածքներ, վորոնց տալիս են խրատական այլաբանության ձևը, և վորոնք մեր հին գրականության մեջ հայտնի յեն մի ընդհանուր առակ անվան տակ:

Առաջին հեղինակը, վորի համար հաղորդում են, թե գրել է առակներ, է Ներսես Շնորհալին (1102—1173), վորի համար կիրակոս Գանձակեցին գրում է, թե «Արար և առակս խորհրդաբար ի զրոց, զի փոխանակ առասպելեաց զայն ասածցեն ի գինարբուս և ի հարսանիս» (Պատմութիւն Հայոց կիրակոսի Գանձակեցու, Խիֆլիս 1909, յեր. 140 հա.): Շնորհալու անունով մնացած կան 120 «Առակք վասն ուրախութեան մարդկանս: Դրանք, սակայն, վոստանվորով հանելուկներ են և վոչ առակներ:

Հենց վոր յեկեղեցականին սկսում է մշակել ժողովրդական գրական տեսակը, թեկուզ այնպիսի հասարակ տեսակը, ինչպես է հանելուկը, նա արդեն ակամա յենթարկվում է ժողովրդական վողուն, բանեցնելով ժամանակի խոսակցական լեզուն և հետաքրքրվելով յերկբավոր և իրական

*) Այս մասին մանրամասնություններ տես Մ. Արեղյանի «Հին գուսանական ժողովրդական յերգեր» աշխատության մեջ՝ տղված Պետ. Համալսարանի «Տեղեկագրի» № 2—3, 4 և 6. ապա և առանձին գրքով, Յերևան. 1911.

**) Այս մասին, նաև Մ. Արեղյանի «Համառոտություն հին գրականության պատմության» (գաղտնիքաց, Յերևանի Ժող. Համալսարանի, 1921—22 ճեմ. տարվա), Յերևան 1923.

բաներով ու կյանքով: Ինչքան եւ Շնորհալին խորում ե աշխարհական վոգուց, բայց և այնպես մեր ժողովրդական բանահյուսութունը թողել ե արդեն իր ազդեցութունը նրա հանելուկների վրա:

3

Իսկական առակների առաջին ժողովողն ու խմբագրողն ե Մխիթար Գոշը (+1213թ.), վոր յերկտասարդ հասակում ժամանակակից ե յեղել Շնորհալուն: Ն. Մառը կասկածում ե, թե Գոշի անունով հայտնի առակները («Առակք Մխիթարայ Գոշէ», Վենետիկ, 1854. յետևից տպված են նաև «Առակք Ողոմպիանու») նրա՞նք՝ Մխիթար Գոշինը լինեն. բայց նրա կասկածը չի հաստատված համոզիչ հիմունքներով: Վոր Կիրակոս Գանձակեցին, — վորը վոչ թե Մխիթարի աշակերտն ե, ինչպես սխալմամբ դնում ե Մառը (С. п. ч. I, յեր. 66 հտ.), այլ Վանական վարդապետի աշակերտը և Մխիթարին վոչ ժամանակակից, — վոր Կիրակոսը չի հիշատակում, թե Մխիթարն առակներ ե գրել, այդ իհարկե չի կարելի իբրև հիմք ծառայեցնել, ինչպես անում ե Ն. Մառը, կասկածելու, թե Մխիթարն ե հեղինակ նրա անունով հայտնի առակների Գանձակեցին նպատակ չի գրել Մխիթարի բոլոր յերկերի ցուցակը տալ և վոչ նրա բոլոր յերկերն ել նա հիշում ե, ինչպես ի միջի այլոց նա չի հիշատակում նաև Մխիթարի «Դատաստանագիրքն» ևս:

Մառի կասկածի համար, սակայն, իբրև հիմունք ծառայել ե նաև այն, վոր եղմիածնի Մատ. մի ձեռագրի մեջ (№. 2238), — վոր ժողովածու յե զանազան յերկերի (մասամբ ամբողջապես արտագրված, մասամբ հատվածորեն), — ի միջի այլոց կա վերջում Մխիթար Գոշի առակների վերջին մասը՝ «Առակք ստեղծականք», վորի համար իբրև հեղինակ, վերնագրի մեջ գրված ե Յովհաննես Ծործորեցին և վորի վերջում կա հետևյալ հիշատակաբանը. «Եւ զվերջացեալս ի բարեաց զործոց զտարտամ գրէչս զԾոճ ծանօթ բանի ե տեղեաւ երգնկացի: Իսկ այժմ՝ Ծործորեցի. Աղաչեմ չմոռանալ ի բարիս զիս, և զիմսն ամենայն: Ի թվականիս Փրկչին ոյժով եւ զպիտակ պէտս Դրիգոր զվերջին գծող յիշեալ աղաչեմ»: Նույն տեղում ներքին լուսանցքում. «Իսկ ըստ հայոց էճխդ աւարտ եղև գիրքս»: Ապա մի հիշատակարան ևս, վոր ըստ Ն. Մառի ժողովածուն կազմողինն եւ Վերևում բերված հիշատակարանից Ն. Մառը յգրականացնում ե, թե Ծործորեցին հիշված ժողովածուն կազմողը չե, այլ առակների արտագրողն եւ Վոր ժողովածուի մեջ Ծործորեցին դարձել ե առակների հեղինակ, այդ իբր նրանից ե, վոր ժողովածուի մեջ սկզբնապես առակների համար հեղինակ հիշված չի յեղել: Վոր ժողովածուի մեջ առակներն համար հեղինակ հիշված չի յեղել, այդ իբր նրանից ե, վոր Ծործորեցու արտագրածը, վորից ողտ լել ե ժողովածուն կազմողը, այդպես ե յեղել: Վոր Ծործորեցու արտագրածի մեջ հեղինակ հիշված չի յեղել, այդ ել ցույց ե տալիս, վոր Մխիթարի անունով հայտնի առակները հին ժամանակ անառնուն են յեղել: Հետևաբար, հետագայում շատ ուշ ժամանակ, արտաքրողներն այդ առակները վերագրել են Մխիթարին:

Այսպեսի յենթադրություններով, սակայն, և այն հանգամանքով, վոր առակաների ձեռադիրները հետին դարերի յեն, կարելի չէ անստույգ համարել Մխիթարի հեղինակ լինելը: Բանը վոր յենթադրության և հասնում, կարելի չէ շատ տեսակ-տեսակ յենթադրություններ ել անել: Քանի վոր մեր ձեռքը չի հասել Մործորեցու արտագրածը, կարող ենք յենթադրել, վոր դա ունեցած է յեղել Մխիթարի անունը, բայց սկզբի թիւթը կարող եր մաշված կամ պոկված լինել, ուստի և հիշված ժողովածուն կազմույն առականերն անանուն դրած լինել իր ժողովածուի մեջ: Կարող եր ժողովածուն կազմողը, քանի վոր բոլոր առակաները չեւ արտագրուեմ, այլ միայն վերջին մասը, մոռացմամբ չդնել առակաների հեղինակի անունը: Նա կարող եր նույնիսկ դրած լինել Մխիթար անունը, և մի արտագրող մոռանալ, կամ թե անզուգուրթյամբ Մխիթարի տեղ Մործորեցի դնել, և այլն և այլն:

Այսպես ուրեմն, կարելի չէ լուի յենթադրության վրա հիմնվելով հարցական թողնել այդ առակաների հեղինակի ով լինելը, կամ հետին դարերում գրչակաների ձեռով ավելացրած համարել Մխիթարի անունը, վոր կա ամբողջական ձեռագիրների վրա, թեկուզ դրանք շատ հին չլինեն:

Խե Մխիթարի անունով անցած առակաները նրանք են, այդ ցույց է տալիս նրանց բովանդակությունն ել, վոր, ինչպես Ն. Մառն ել դիտում է, տանում է մեզ այն ժամանակը, «յերբ հայերը դեռ քաղաքական ազատություն ունեյին և մահմեդականներից ավելի ուժեղ ելին զղում իրենց»: Յեվ այդ հենց Մխիթար Գոշի ժամանակն է, 12-րդ դարի յերկրորդ կեսին, յերբ հայերը թե արեւելքում և թե արեւմուտքում—Կիլիկիայում շատ ավելի ուժեղ ելին, քան մահմեդականները:

Կանգ առնենք մի քանի ուրիշ հանգամանքներ վրա ևս: Այդ առակաների հեղինակը շատ հմուտ մարդ է յեղել, ինչպես յեղել է և Մխիթարը: Նա գիտակցաբար վերաբերվելով իր գործին՝ հարկ է համարում մեկ-մեկ ծանոթություններ տալ իր կատարած գործի և ընդհանրապես առակաների մասին իշխել մի գրական տեսակի: Այդ ծանոթություններից հենց իմանում ենք, վոր այդ ժողովածուն իր տեսակում ժամանակով առաջինն է մեր մեջ:

Ամենից առաջ տեսնում ենք, վոր առականեր ժողովելն ու գրելը դեռ անպատշաճ և համարվում. ուստի և հեղինակը բացատրում է, թե ինչու չէ ինքը գրել. «Թկպետ անբմբռն [անպատշաճ Մ. Ա.] սասցեակքդ կարծի, սակայն թանձրամտաց առաւել ախորժելի երեին, որոյ աղագաւ սակաւդ յօժարեցաք գրել» (Մխ. Առ. Ին, յեր. 30): Ապա այդ գործն ուրիշները ծաղրելի յեն համարում, և հեղինակը խնդրում է, վոր չծաղրեն իրեն: Ամեն անգամ վոր մեր հեղինակները մի նոր բան են մտցնում գրականության մեջ, ստիպված են կամ ապացուցանել, թե թույլատրելի չէ իրենց արածը, կամ խնդրել, վոր չծաղրեն իրենց: Այսպես, Կորյունը մեր գրականության սկզբում դեռ ստիպված է յերկար ու բարակ ապացուցանել, թե վոչ միայն թույլատրելի չէ, այլ և հարկավոր է Մեսրոպ Մաշտոցի նման մարդկանց վարքը գրել: Ներսես Շնորհալին իր «Ողբերգութեան» հիշատակարանում

ստիպում է ապացուցանել, թե կարելի չե մեր այժմ սովորական դարձած տաղահալոթյուններ, վոր այն ժամանակ դործածվում եր միայն աշխարհիկ յերդերի համար, բանաստեղծությունն հորինել նաև հոգեբույժներին մասին:

Յովհան Մամեկոնյանը ժողովրդական գրույցներէց ու յերդերէց խմբագրելով «Տարոնոյ պատերազմը», վերջը գրում է. «Յորժամ զարադրութիւնս զայս բնորոշակէք, մի ինչ թուեսցի ծաղր ու մեք»... Նույն իսկ Մխիթար Գոշն իր «Դատաստանադրէ» համար, վոր նորութիւնն եր մեր գրականութեան մեջ, գրում է. «Եւ արդ մի ոք պարսաւեսցէ զասացեալս, զի թէ տխմար ոք իցէ՝ ուսցի, և թէ կատարեալ՝ զպականս ի սմանէ լցցէ. զերկոցունցն պատրաստ եմք սիրով ընդունել զկամսն» («Դատաստանադրէ» Վաղարշապատ, 1880 շնախադրութիւն», յեր. 17), չիտ այսպես և նույն Մխիթար Գոշն առականքի համար գրում և վերջաբանում. «Եւ արդ մի ոք ծաղր առնիցէ զմեզ, զի առեւել ի սոցունց ի գրուցաբուրութիւն և յասացուածս ի դէպ համարեցաք, քան զսխալահաւանացն՝ վարի սովորութեամբ: Եթէ հաճոյ ոմանց թուիցի, տեսաւն շնորհ. ապա թէ ոչ, թողութիւն մեզ արասցէ սիրով նորին» (յեր. 153):

Մեծ դժվարութեամբ ուրեմն, նույն իսկ առակի տեսակը մուտք ե գործում յեկեղեցականի գրականութեան մեջ: Դա ծաղրի առարկա չե, զի գրա առասպելն աշխարհիկ բնավորութիւնն ունի. և յեթե յեկեղեցականը մշակում և ալ, վորովհետեւ թանձրամիտներին ախորժելի չե առականքի առասպելը, և դրանով հեշտ ե սովորեցնել ու կրթել:

Մխիթար Գոշն առականքի մեջ տեսնում ե բնականաբար յերկու մաս. բուն պատմվածքը և խրատական յեզրակացութիւնը:

Պատմվածքը, — վոր նա կոչում և առաւ, գաղափար, օրինակ, եղամակ և այլ բառերով, — ըստ Մխիթարի՝ լինում և յերեք տեսակ՝ բարոյական, առասպելական և ստեղծական: Բարոյական առականքը (բարոյք, բարք = բնութիւն բառից, վորից և «Բարոյախօս» գրքի կոչումը) առնված են կենդանիների բարքից, բնավորութիւնից կամ բույսերի հատկութիւններից և զատ քիչ ունեն կամ բնավ չունեն գործողութիւն: Առասպելական առականքի մեջ պատմվածքը վերաբերում ե կենդանիներին, յերդերեմն և բույսերին, իբրեւ գործող աշխարհ. իսկ ստեղծական առականքն առնված են մարդկանց կյանքից, գործող աշխարհ մարդիկ են:

Քրատական յեզրակացութիւնը, — վոր հեղինակը կոչում է՝ խրոս, ցեամակ, ճամարտօրիւն և այլ բառերով, — յերկու տեսակ է՝ աշխարհիկ և յեկեղեցական. «Դիցուք և սակաւուք առակք ստեղծականք, որ նման ասացելոցն կերպարանէ զճամարտութիւնն աշխարհօրէն և եկեղեցականապէս» (Մխ. Առ. յեր. 128):

Առականքի յերկու մասերէց հոգևորական հեղինակի համար բնականաբար ավելի կարևոր արժեք ունի այս յերկրորդը, խրատական մասը, այն ել ավելի եկեղեցական մեկնութեամբ, վորովհետեւ հեղինակը ցանկանում ե, վոր խոսակցութեան ժամանակ մեջ բերվեն այդպիսի մեկնութեամբ առականք, քան աշխարհականների սովորութեամբ վարվել, այսինքն առակ-

ները լուկ աշխարհական մեկնությունը պատմելու Ուստի խրատները մեջ կարևոր տեղ զբաղեցնում են հոգեշահ խրատներն ու հոգևոր առաքելությունները: Բայց Մխիթարի նման մեկը չէր կարող անուշադիր մնալ դեպի կենցաղական խրատը, առորյա ընկերական հարաբերությունները, սոցիալական և ազգերի հարաբերության և նման խնդիրները կամ «Համարտութիւնն աշխարհօրէն»:

Մի անգամ, վոր հեղինակի համար առակի մեջ եյալանն ե առակի «Համարտութիւնը», ուստի և նա առակը մշակում ե այնպես, վոր կարևոր տեղ զբաղեցնում «Համարտութիւնը»: Կը նշանակե՝ առակը հորինւում ե վոչ իբրև ինքնուրույն բանաստեղծական տեսակ, այլ իբրև մի ուսուցական, դեղակտիկական յերկ, վոր նպատակ ունի ախորժելի ձևով խրատել և ազդել ինչ համար առակի առասպելն այնպես ե հորինւում, կամ փոփոխւում (յերբ ուրիշ աղբյուրներից ե առնւած), վոր հարմարվի բարոյակրթական մասին, կամ գործողութիւնն այնպես կարճ ե պատմւում, վոր յերբմն նույն խոսք խրատական մասն ալիքի մեծ տեղ ե բռնում, քան պատմւածքը: Ուստի սակալ ենք գտնում բանաստեղծական նկարչութիւն, կենդանիների և մարդկանց բնավորութիւնն եյական գծերի բնորոշում և վոչ ել մէշտ արագ և ուժեղ գործողութիւն ենք գտնում սեղմ ու պայծառ պատմւածքի մեջ, վոր առակների կենդանութիւնն ե կազմում: Արդարև, Մխիթար Գոշն ել սեղմ ու հակիրճ ե, բայց վոչ մէշտ պայծառ ու կենդանի: Սոժորաբար մի յերկու ընդհանուր գծեր ե տալիս նա և ապա խսկոյն աճեցնում ե խրատին: Յերբմն ել պատմւածքն այնքան կարճ և և այնպիսի, վոր զժվարութեամբ կարելի յե յեղրակացութիւն հանել, կամ հանած յեղրակացութիւնը շատ թույլ կապով ե կապւում պատմւածքին, կամ համապատասխան չե նրան:

Հեղինակը, սակայն, իր խրատը բալական չհամարելով՝ դեռ գրում ե «Հառեալ նշանակալ չափաւորապէս համեմատեցաք՝ պատճառս տալով տեսողաց բանին նմանապէս զթերին լցուցանել» (Մխ. Առ. յեր. 30): Կը նշանակե՝ Մխիթարն առակն ասողին ազատ ե թողնում մեկնության թերին լրացնել, ճիշտ խնչպես նա իր Դատաստանագրքի «կատարեալ» ընթերցողի համար ես ասում ե, թե՝ «զպակասն ի սմանէ ինքն լցցէ»: Այստեղ ել, ուրբմն, առակների և Դատաստանագրքի հեղինակը նման ձևով ե մտածում:

Բնականաբար պիտի սպասենք, վոր Մխիթար Գոշն առակները մեջ ես նույն հայացքն ունենա դատաստանի մասին, ինչ վոր Դատաստանագրքի մեջ: Այստեղ նախադրութեան մեջ պատմւում ե, թե դատաւորները պիտք ե ուղիղ դատաստան անեն («Դատ.» յեր. 28) և ապա (յեր. 32) գրում ե. «Եւ թէ ոսոխքն յատենի անդ բանակուիւ լիցին մի տայցեն թոյլ, այլ սաստեացեն... Ուսցին և դատախազքն, թէ ոչ վասն վիճոյ դան յատենան... ըստ կարգի տայցեն խօսել ոսոխացն»: Այս յերկու դադափարն ել, դատաւորի արդար մարդ լինելու հետ միասին, արտահայտւած ենք գտնում մի առակի մեջ:

Հաւաքով դրոյն տատարակի քակտեալ, և իւր զինեալ, և յեղեւ նոցա երթալ առ արդարն արտադիլ ի դատաստան. և անդ զմիմեանս նախատէին և պարժէին, տատարակ ողջախոտութեամբ, կրօնաւորութեամբ, և հաւաքով պահօք քառասնօրէիւք. և նախատի ոմն կեղծաւորութեամբ, և ոմն դայոյդ ուսեւոյդ զվաստակն: Իսկ դատաւորն երկուցն սաստէ և հարցանէ զհաւաքով. թէ՛ բնդէ՞ր քակտեցիր: Եւ նա ասէ. Եւնուածո՛ւ նշան ինչ ոչ տեսի, և վասն այն ասի ինձ: Հարցանէ գորոհնալ. Ի՞նչ էիր եղեալ զոր առեր: Եւ նա ասէ՛ ոչ—Եւ կա՛ ոչ էր երկու հեծան եղեալ ի վերայ միմեանց: Եւ ասէ՛ եղեալ էր. Հրամայէ անգրէն դարձուցանել, նա և տուգանս եւս տալ:

Այս տատան ուղիղ հրամայէ առակս դատել, և ոչ յայտնի մեծաբանել, և կամ թշնամանել զմիմեանց դատախազաց: Եւ դարձեալ զի զոր չիցեմք եղեալ՝ ուսուցանէ շառնուր, և զչինուածս յայլոյ՝ թէ և յոռի իցեմ, չքակել:

Մի. ճՆ. 118.

Այստեղ, ուրեմն, տեսնում ենք, թե ինչպես վոսոխները՝ Հալիբալն ու Տատարակը, դատաստանի յեն հշուտ արդար Արաղի մոտ. բայց նրա առա՛ իրար նախատում են, իրար հետ վիճում են և ամեն մեկն իր արժանավրությամբ պարծնում: Դատավորն յերկուսին ել սաստում ե, ապա հարց ու փորձ անում և դատաստան կտրում:

Տեսնենք մի ուրիշ գիծ ել. Դատաստանագրքի մեջ (Նախադրություն, յեր. 29) Մխիթարը պատվիրում ե, թե «Դատաւորն մի լուիցէ զոսոխն կամ զդատախազին բանսն միայն»... Այսինքն նա մեկ կողմը միայն լսելով՝ չպիտի դատ անի: Առակներէրց մեկի մեջ ասում ե, թե անշնորհ դատողները՝ լինեն թագավոր, իշխան, դատավոր, թե յեկեղեցու առաջնորդ, ժամփորձապէս դատապարտեն, այսինքն առանց քննելու դատապարտում են նուէն իսկ արտաքին տեսքից կամ համբավից (այսինքն ուրիշներից լսելով). և առակախօսը պատվիրում ե, թե չպետք ե թի տեսնենէ կամ ի համբաւէ դատելը:

Յանձնից որ եհար գունապի՛ կարծելով զնա զմիկ, որոյ զայրացեալ սասց. Ո անագորոյն, գտունկ ի պտղո, արժան է ճանաչիլ, և ոչ ի տեսնել:

Նշանակ բերէ առակս զանշնորհ դատողս՝ զթագաւորս և զիշխանս և զդատաւորս. զառաջնորդս եկեղեցւոյ՝ զնոսա յանգրձանելով, զի ամփոքապէս դատապարտեն. զընչիւ գիտելի ե ի գործոց նոցա (ըստ որում տէրն իսկ սասց, թե ՚ի պտղոյ նոցա ծանրից զնոսա) և վոչ ի տեսնենէ կամ ի համբաւէ դատել. որով և բազում վնաս գործի՝ դրօշմ իրեւ զչարս խոշտանդելով:

Մի. ԺԸ. 19.

Նկատենք և հետեւյալը:

Մխիթար Դոշի առակները, վորոնց թիւը 190 ե, խմբագրված են, ինչպես վերևում ասացինք, մի շատ հմուտ մարդու ձեռով, ինչպիսին իրոք յեղել ե Մխիթարը: Դրանց համար նա ոգտվել ե Նդպոսի առակներից ու Բարոյախոսից, ինչպես և այլ գրավոր աղբյուրներից ու ժողովրդական առակներից: Անպայման կան և այնպիսիները, վոր հեղինակի իրեն ստեղծածն են: Նա, ինչպես յերևում ե, մեծ նյութ ե ունեցել ձեռի տակ, բայց ամեն ինչ վոր ունեցել ե, չի գործադրել. «Ջբազումս ՚ի գիտելիաց և յանգիտելաց թողաք իրր համազրս յօրինակս և յառակս» (Մի. Առ. յեր. 29): Բայց ամեն ինչ, վոր նա առել ե իր ժողովածուի մեջ՝ շատ վորոյ կարգով դասավորել ե ըստ նյութի, այսինքն՝ ըստ գործող անձերի, նախ՝ յերկինք

ու յերկիր և յերկնայիններ և ապա՝ բուսներ, լեռներ, կենդանիներ ու մարդիկ։ Մեբողջի մեջ յերևում է մի մտածող, կարգ ու կանոն սիրող մարդու վոգել։ Այսպիսի միակերպություն չունենե՞լ Վարդանա առակները, վորոնք և մի մարդու գրչից չեն գուրս յեկած և վոչ ել մի դարու արգասիք են։

4

Ինչպե՞ս են ծագել Վարդանա առակները, վոր մեր միջնադարյան գրականության մեծ հարստությունն են կազմում։ Այս մասին հղարկելով Ն. Մառի վերևում հիշված մեծ աշխատանքին, այստեղ միայն հետևյալը։ Վարդան Այգեկցին, վոր Վարդանա առակների նախահայրն է, Մխիթար Գողթց մի սերունդ կրտսեր եւ Մխիթարը վախճանվում է 1213 թ. Վրոքին ծերությունը հասկում, «ալետրեալ լի աւուրք», իսկ Վարդանն այդ ժամանակ արդեն անվանի յեր դարձած իր բանաստեղծական քարոզներով, վոր ուղղում եր հարուստ քաղաքացիների և վաճառականների դեմ։ Բայց նա, յերևի իր քարոզների պատճառով, ստիպված է լինում փախչել իր սիրած Դուբեթց (Կիլիկիայում)։ Յերկու տարի թափառելուց և շատ նեղություններ կրելուց հետո՝ նա 1212 թվին ապաստան է գտնում Սև լեռան վրա կամ մոտերը դռնված մի անապատում, վոր կոչվում եր Այգեակի։ Այստեղ նա ապրում է մինչև խորհն ծերություն, ուստի և կոչվում է Այգեկցի։ Նա իր կյանքի յերկրորդ մասի ընթացքում պարապում և գլխավորապես գրականությամբ։ Նրա գրական ամենամեծ նշանակությունն այն է, վոր նա, ինչպես Ն. Մառը ցույց է տալիս, ստեղծել է քարոզների մի առանձին տեսակ, վորոնց մեջ գործ է ածում առակներ, վոր նրա գաղափարները պարզում և հասկանալի յեն դարձնում։

Նրա գործածած առակները գլուր են գալիս և բերանացի ու գրավոր տարածվում են, և, ինչպես կարծում է Ն. Մառը, ամենայն հավանականությունով նա ինքը կազմած պիտի լինի առակների մի յերկու փոքր ժողովածուներ, բայց գուցե և ուրիշները նրա ճառերից հանել են առակները և ի մի խմբել, վորով և առաջացել են Վարդանա առակները։

Այդ առակների ժողովածուները, սակայն, անփոփոխ չեն մնում, այլ մինչև 17-րդ դարի կեսերը յենթարկվում են մեծ զարգացման։ Հետգհտե՞ն Վարդանին շատ նմանողներ են գուրս գալիս և կազմում են զանազան նոր ժողովածուներ թե՛ Վարդանի առակներից և թե ուրիշ աղբյուրներից։ Այսպես զարգանում են առակների ժողովածուները, զի դրանց համար պահանջ կար։ Դրանք հարկավոր եյին, նախ՝ քարոզության համար և պետք է ոգնելին քարոզիչներին, թե վեր հոգեզահ խրատի համար ինչ առակ կարելի յեր պատմել։ Առակների ժողովածուներն. ուրեմն, ծառայում եյին նույն գործնական նպատակին, վորի համար և կիրառել եր Այգեկցին։ Ապա, ինչպես սկզբում ասվեց, առակներ սովորեցնում եյին դպրոցներում և զանազան ձևերով վերամշակել եյին տալիս. ուստի և կազմվում եյին նոր ժողովածուներ՝ հաճախ վերամշակված ձևերով։ Բայց վոր գլխավորն է՝ 12—13-րդ դարերում ամեն տեղ առհասարակ, այնպես ել մեզնում, քաղաքացիները սիրում եյին պատմվածքներ, առակներ ու գրույցներ և առասպելներ։

Այս վերջին համադամանքը պատճառեւ դառնում, վոր շուտով Վարդանայ առականներն ժողովածուներն մեջ (ն. Մառի խմբագրութեամբ բ. մասն «Ժողովածոյք առականց Վարդանայ») մտնում են վոչ միայն առականներ սովորական մտքով, այլ և ամեն տեսակ պատմվածքներ, վոչ միայն գրքերից, այլ և ժողովրդի բերանից, վերջից ստանալով մի հոգեւէտ խրատական մաս, վոր շատ անգամ բռնադրոսիկ կերպով կցված և բռն պատմութեամբն: Այսպէս «Միամիտ դոգք» գլխաւ լինի:

Երկու դոգք դնացին ի մեծատան միում յերգիւր և կամէին դողանալ զինչս նորա նւ. էր լուսնկայ, և իմացաւ այն, որ դոգքն ի յերգիւրն եկին նւ ասէ կինն ցայրն, Թէ՛ Ամեն դանձաւ և դրամն և դուման իւտախ է եկեր քեզ նւ ասէ այն: Երթայի ի դողութիւն ի գիշերի մեծատանց երթիւր ի լուսնկայ լուսոյն, որպէս որ այժմ կայ, և շուր լուսնկին յերգիւր ի վայր ցայթէր զերթ հիմայ, և ես գիբի առնէի զլուսնկին շուրն՝ քանէն և ի վայր կէջնայի ի տունն և բան մի կասէի. որ ինչ զեղեցիկ դումաշ կայր ի տանն, նա ամենն ինձ կերնար և առնէի ի շուրն կապէի և զիս այլ ի նեա դումաշին, և շուրն զիս ի վեր կուսանէր ի տունն (տանին), և այսպէս դամենն շահեր եմ: Իրքն լսեցին դոգքն զբանս զայս, խրատաբարացան և հաւատացին պատրոզական բանին և զերկեցին զուրքն, որ ի վայր իջնուն, առնան և խելաց թափեցան: Եւ այն յարեաւ և ետպան դնոտաւ:

Յուցանէ առակս, թէ մարդն որ դողանայ և ստանալական բանին հալածայ, նա որպէս այն դոգքն կարնին, և պատճառն ի կնոջն ելաւ, որ այն դոգքն յերգիւր ի վայր անկան հինն ի կոզն է, և կոզն ծուռ է և ինքն չար է:

Ա. Վարդ. Բ., 298. ՄԴԷ

Նույնպիսի յն և «Ճշտեւոյ տղայ» գլխաւ լինի իր մեկնաբանութեամբ, վոր խրատ ևլ չն:

Ճշտեւոյ տղան դաւալ գեկան մի կարմիր և լայնեաց մեծածայն, թէ նա փող մի դտայ: Մի մարդ մի անդ կար և ասաց, թէ Այդ փողոյդ առ քեզ: Դ. փող և սուրբ Ասաց՝ Ձէ: Ասաց՝ առ Ժ. փող Ասաց՝ Ձէ: ասաց՝ Առ Բ. փող Ասաց՝ Ձէ: Եւ նայ ետ նայ շէշ տտաց: Եւ յորժամ թրեցաւ. Զորոս մի փող, ասաց ճոտոյն տղայն, թէ՛ Թաւրեշէ քան զէշ, որ ասած Եւ նայ դտայ: Եւ նայ տտաց, թէ՛ Հաչէ քան զըռն: որ ասած Եւ նայ Հաչեց: Եւ յայժմ տտաց հուհուն տղայն, թէ՛ Դու. շուն և էշ խելաց գիտն, որ այս կարմիր գեկան է, և ես ոչ գիտեմ:

Յուցանէ առակս, թէ ի մանկանց և ի տղայոց մէջն կայ, որ զմեծածեծ մարդիւր խորեն և ոչ առհրկուին և խաբուին. և կան յաղթարհի մարդիւր և մանուկ տղաց և ճգնաւորք, որ դտաւանայ ծաղր առնեն և ոչ խաբուին և ոչ կարնին:

Ա. Վարդ. Բ., 175. ՃԽԸ.

«Երէց ասորի և երկտասարդ հայ» պատմութեամբ, վորն մեջ ասորի քահանայի տղեսութեան և ծաղրութեամբ:

Էրէց մի ասորի բարի և իմաստուն և մարդ մի հայ կուսէին ի հայիւն, որ կայր ի միջի իւրեանցն: Ասէ հայն. Ասում զքարն և կտրեմ զ լր. ասամունքդ որ կայ ի բերանդ: Զայրմացաւ այն էրէցն ընդ նորա ասին. դնաց առ իրիցիկին. պարկեցո բորդ վեր *) և ասէ. Օրուի, առ մոծեղն, առ եկ տես ի բերանս. թէ քանի ակալի կայ ինձ: Էսա էրէցիկին զլուսն ու համբէջ. նայ այն էր, զոր նայ էր ասացիւր լր. ակալի. զոր նայ էր ասացիւր: Դայ շուտ մի առ հայն և ասէ. Փառք աստուծոյ, կամ իմաստուն մարդ հայ կուսն կամ սուրբ հոգին ի քեզ բնակեալ է. դու զինչ գրեացիր, թէ իմ ասամունքս լր. էր: Եւ նայ ասէ. Յիմ ասամունքս գիտացի: Եւ շուտ հաշտեցան:

*) Այսինքն՝ «Գառնեցաւ պորտ ի վեր», Մ. Ա.

Յուզանէ առակս, թէ յիմ մարմնայն զձերտ զիտացի, որդեակէ իմ. զի հասարակած է մեղքն և պատերազմ սատանայի, և միապէս կորուսանէ զամենայն մարդ՝ զժողովոցն առնէ:

Առ. Վարդ. Բ. 63, 37.

Աշարսն և սկեսուր և սկեսրայր՝ գեղեցիկ առակի մեջ շատ պայծառ ու նկարեն յերևում և ընտանիքի մեջ հարսի ստրկական վիճակը բռնակալ սկեսրի և սկեսրայրի ձեռի տակ, վորոնց խոհարհ ծառան և նա և հլու հնա-դանդուկթյամբ ու մեծ համբերությամբ պարտավոր և կատարել նրանց ամեն անմիտ պատվերները:

Նոր հարս մի եղև խոնարհ և համբերող. և կամեցան փորձել զնայ սկիտուրն և սկես-րայր նորաւ Ասէ մին, թէ՛ Զգուան փակէ՛ մե միւսն ասէ. Բաց. Մին ասէ. մի փակէ զգուան. հողմ է. մե իբրև զնաց և փակեաց զգուան. և միւսն ասէ. մի բաց զգուան, զի ծուխ է: մե սկեսան ասել՝ փակէ և բաց մե նայ սկսաւ փակել և բանալ կարգաւ և ասէ. Բեզ փակեմ և զորալ բանամ մե յերկարեաց և ոչ բարկացաւ:

Յուզանէ առակս, թէ առաքելացն և մարդաբէքն մեծ համբերութեամբ և հեղութեամբ քարոզեցին արարչի և մեծ սպառնալեալք փակեցին զգոխքն, զի մի մտցն ի նայ. և բացին զարքայութիւն ողորմությամբ աստուծոյ և զնորհալքն, զի մեղաւորք զիմեն և մտցն ի նայ յուսով ապաշխարութեամբ. այս է փակելն և բանալն:

Առ. Վարդ. Բ. 67, 38:

Վարդապետ Առակների այս բազմազան մեծ նյութը (Ն. Մառի խմբա-գրությամբ 485 առակ հաճախ իրենց վարխաններով), վոր մինչև 19-րդ դարը շատ սիրելի յի յեղել վոչ պահանջկոտ ընթերցողներէ համար, դժ-բախտաբար իր զարգացման կես ճանապարհին կանգ և առել, աշոյայման այն քաղաքական գրության պատճառով, վոր ունիւր Հայաստանը 14—17-րդ դարերում: Մի Թլիւրանցի կամ Աղթամարցի, իր խաղաղ անկյունը քաշ-ված, կարող եր իր սիրտ և բնության յերգը հնչեցնել և զարգացնել այդ դարերում. առակները գեղեցիկ մշակելու համար, սակայն, բավական չե-ր մի փոքրիկ խաղաղ անկյունը: Դրա համար պետք եր, վոր խաղաղ ապրե-լիս լինել և ավելի պահանջկոտ լինել այն հասարակությունը, այն քաղա-քացի բնակչությունը, վորից ծագել ելին առակները և վորի համար պետք է արվեստավոր նոր հորինվելին դրանք: Այդպիսի հասարակություն և այդ-պիսի պահանջ, սակայն, չկար և չեր կարող լինել 14—17-րդ դարերում, յերբ Հայաստանի քաղաքներն ավերվում ելին և ժողովուրդն ընդհանրապես ավելի հետադիմում եր, քան առաջադիմում: Այդ պատճառով և առակների ժողովածուները մնում են իրենց նախնական ձևով, բավարարություն տա-լով միամիտ ընթերցողներին:

Ստեղծագործական հաճաքը, կարելի յի ասել, շատ քիչ և ձեռք տվել այդ ժողովածուների մեջ ամբարված բազմազան նյութերին, դրանք վորոշ ուղղությամբ բանաստեղծութեն վերամշակելու համար: Թեպետ և կան ըն-տիր ու կենդանի վոճով համեղ ու սրամիտ պատմվածքներ, ևս ավելի յերկրորդ կամ յերրորդ խմբագրությամբ, բայց այդ ամենը պատահաբար և կատարված:

Նույնպես պատահաբար և վոչ գիտակցաբար ժողովրդականից ծագող առակների և զրույցների հետ մտնում և նաև ժողովրդական լեզուն և սա-մ-

կարանությունը և ընդհանրապես ժողովրդական կյանքն ու վոգին: Դրանց ազդեցության տակ, գրական ծագում ունեցող առակներն ևս, վորոնք մաքուր գրաբար լեզվով են, յերբմեջ վերամշակվում են կենդանի ժողովրդական լեզվով ու ձևով, դործողությունը դառնում է ավելի լրիվ, պատմվածքն ավելի շարժուն և լեզուն խոսակցական ու զվարթ: Նյութն ուրեմն արտաքին ձևով կենդանանում և ժողովրդական ընավորություն է ստանում. բայց այդ արտաքինը հետ ընդհանրապես նաև ներքինն ստանում է ժողովրդական վոգի:

Այսպիսով ուրեմն առակները դառնում են մի տեսակ միջոց ժողովրդական տարրերը մեր հին գրականության մեջ մտցնելու, և դրանց միջոցով մեր գրականությունը հետզհետե մոտենում է ժողովրդին, յենթարկվում աշխարհիկ հոսանքին: Ուստի, յեթե հին ժողովածուների, ինչպես և Մխիթար Գոշի առակները մեջ յերևում է ավելի կրոնական ուղղությունը, հետագա ժողովածուների կամ հին առակների նոր մշակությունների մեջ տեսնում ենք նաև նոր, վոչ յեկեղեցական մտածողության յեղանակներ և, վոր գլխավորն է, ժողովրդական իրական կյանքի պատկերը, մի բոլորովին նոր աշխարհայեցողությամբ, վոր դոնում ենք նաև Ֆրիկի բանաստեղծության մեջ և վոր մեր գրականության մեջ չի յերևում մինչև 12-րդ դարը: Յեվ այս վոչ միայն Վարդանա, այլ և արդեն Մխիթար Գոշի առակները մեջ:

5

Տեսե՛նք, թե ինչպես և գծադրվում հասարակական կյանքի պատկերն առակների մեջ, ավելի Մխիթար Գոշի, նկատի ունենալով, հարկավ, վոչ աշխարհն առաստեղական, վորքան խրատական մասերը, վորովհետե մինչ առաջինները կարող են ընդհանուր ընավորություն ունենալ և մեծ մասամբ այդպիսի յեն, առաջինները ծագում են հայ հեղինակներից, վորոնք և իրենց դասակարգի գաղափարախոսներն են: Յես այստեղ կառնեմ հատկապես, նախ՝ աղնականության և աշխատավոր ռամիկ դասի՝ հարաբերությունը և յերկրորդի պայքարն առաջինի դեմ, ապա՝ այն խուլ պայքարը, վոր յերևում է մի կողմից՝ քաղաքի տարրեր՝ արհեստավորների, մյուս կողմից՝ քաղաքի և գյուղի միջև. յերրորդ՝ թե ինչ վիճակ ունի յեկեղեցականությունը և ինչ կարծիք ունեն նրա մասին աշխատավորները, կամ աշխատավորության կելիվ հոգևորականության դեմ, և վերջապես՝ հոգևորականության հայացքը հայերի և այլազգիների իրար հետ հարաբերության վերաբերմամբ:

Յերկրի գլուխը թաղավորն է, վոր ունի իր յերկրորդը: Առակախոս Մխիթարը թագավորի յերկրորդն առհրաժեշտ է համարում: «Հարկաւոր ցուցանէ առակս զերկրորդն լինել թագաւորի և բնաւ կարգաց. զի ոմն գրաբնկարդութիւն պահիցէ, և միւսն զմարտսն վանիցէ»: Մխ. ԿԸ, 64:

Մնացած իշխաններին ել թագավորն ըստ պատշաճի պաշտոններ և տալիս:

Հայեցեալ բեհմոյն յիւրաքանչիւր ազգոս կենդանեաց անկաւոր կարգէ իջխանս, զգուարակ՝ անդէոց, և զիտոյ՝ հօտից, զնոխազ՝ հօքանաց, և զառիւծ՝ զագանաց, զձի՝ բեռնակրաց, և զարծիւ՝ Թոշնոց վայրենեաց, և զաքաղաղ՝ ընտանեաց, և սահմանէ իւրաքանչիւր գործոյ ուշ ունել:

Բարեկարգս կամի առնել առակս զԹագաւորս, ըստ պատշաճի վիճակել զիջխանս և զգառաւորս, նմանազէս և յեկեղեցիս ուղղել զկարգս:

Մի. ԶԶ. 70

Թագաւորի գործը զխաւորապէս այն և, վոր նա կամ աստատակում և ուրիշ յերկիրներ, կամ թե իր յերկրի մեջ՝ տեղեւոյ շրջելով՝ ծանրանում և իրախիններէ վրաս:

Յես կարգելոյ զիջխանս ի ջուրն, Լեւիթանս արքայ, ասեն, զիմրդ է՝ զի ոչ շրջիտ, կամ աստատակում և նա ասէ. Զի Թշնամից առ մեզ ոչ զոն, և անկարօտ եմք իմիք. զմերս վայրենեոց, և ընդ ձեզ ոչ զբոսանամք, զի մի ծանր ձեզ եղէց: Եւ ասացեալքն հաճոյ նոցա թուեցաւ:

Անարկութիւն առակիս այսպէս է. զի Թէ Թագաւորութիւն յայմէ ոչ նեղիցի ի Թագաւորէ՝ և բազական կենան ունիցի, բարի է խաղաղասէր լինել, նա և ոչ իւրոցն ծանրանալ շրջելով. ապա Թէ հարկաւորի ի Թշնամեաց, անարկութիւն է ոչ առ աստատակում:

Մի. ԳԶ. 83

Մխիթարն, ուրեմն, իրատում և, թե յերբ Թագաւորը բազական ատրուստ ունի, ալիւի լալ և խաղաղասէր լինել, և վոչ իրախիններէ վրա ծանրանալ շրջելով:

Թագաւորը վոչ միայն շրջելով և կեղեքում, այլ և իր մոտ յերկրպագելու յեկած իշխաններից շատին կլանելով իրեն կերակուր և դարձնում: Նրանք ևլ Թագաւորից Կրինակ առնելով՝ ալիւի հանդուգն են դառնում, ալիւի ևս հորդորվում են չարիք գործելու և իրենցից Թույլերին և փոքրերին են ուտում: Յեւ յեթե Թագաւորը մեկ-մեկ մեղադրում ու հանդիմանում և ալապիս իշխաններին, այդ արժեք չի ունենում:

Մեղադրեցան ձիւնք ի Թագաւորէն իւրեանց, Թէ Ընդէ՛ր զայլս ուտէք զմանունսն: Եւ նոքա համարձակեալ ասին. Վասնիք ի քէն ուտաք. եկեալ բազմաց յերկրպագութիւն, և կլանելով կերակուր քեզ արարէք. ըստ այսմ և ինքեանք ևս յանդուգնագոյնք եղին:

Զայնոսիկ յանդիմանէ առակս, զի որով ինքեանք գործեն, զայլս բամբասել կամելով առակել ևս ի չարէս յորդորեն՝ քան Թէ կարճեն. վասն զի գործով՝ քան բանիւ ի դէպ է լինել իրատուն:

Մի. Ա. Զ. 89.

Ահա մի Թագաւորութիւն, վոր հիմնված և նրա վրա, վոր գորեղը Թույլին ուտում և: Իսկական և վերջին ուտվողը Ժողովուրդն և կամ աշխատող դասը՝ լինի քաղաքացի Թե շինական, իսկ ազնվականները՝ Թագաւորը, իջխաններն և յեկեղեցականները՝ միայն վայելողն են:

Այսպէս և Մի. Է. 9.

...Զձեզ իջխան կարգելով՝ այնպէս Թագաւորեն... Եւ յօրինեաց զկարգ Թագաւորութեանն յառն առնով նոցա գորթ՝ զինչպետ, և զԹղենի՝ հիւպատոս, զգմիկ՝ զահապետ, և զնախնի՝ բժշկապետ, և զայլս ի պտղոց ի դարմանս, զմայրս՝ ի շինուածս, զանտառ՝ յայրուան գործնի՝ ի բանս, և զայլսն ամենայն իւրաքանչիւր գործն:

Այրվողները հասարակ Ժողովուրդն և, վոր, հարկավ, դո՛ւ չե իր վիճակից. ուստի առակախոսը յեզրակացնում և.

Յանդիման կացութանն առական, թէ ոչ որ կարէ նոխմնալ առանց անփառից, և ոչ բարձրանալ առանց անարգից:

Շատ տխուր և այդ թագավորութեան դրութիւններ:

Միւրթարի մի շարք առականներն մեջ այս սոցիալական անհավասար դրութիւններ, ինչպէս կտեսնենք, խիստ զգալի յեւ ժողովուրդն իշխանների սեփականութիւնն ու ստացվածքն և: Նրանք շատ ուրախանում են, յերբ իրենց հպատակները հաջողութիւն են ունենում, բայց այդ վոչ թե իրենց բարեարտութիւնից, այլ վորովհետեւ այդ հաջողութիւնն եւ իրենցն են համարում, քանի վոր ուղած փամանակ կարող են հպատակներից ամեն մեկին խփել և ուտել:

Վարուժանի տեսնալ բազմորդի դուր՝ դռնանայր զատուծոյ, և խնայից նմա լինէր ևւ ասէ լոր. նթէ ճշմարտութեամբ դռնանա, երանի է քեզ Եւ անդէն եհար դմի ի ձաղուց նորա՝ և բմբունաց Լնէ լորն. Ահա յայտ եղև, զի ոչ վասն ատուծոյ դռնանայր, այլ վասն ազանութեան:

Յայտնէ առական զբարս իշխանաց, զի ուրախ լինին ընդ ձեռամբ անկեոց ընդ յաղոսւածան, ինքեանց վարկանելով զնոցայն՝ քան թէ ստացողացն:

Մի. ՃԺԷ. 99.

Իշխանները, վոր զողերին պատժում են, իրենք ավագակութեամբ ու զողութեամբ են պարապում:

Գող զբորէ բմբունաց առիւծ. և նա ասէ. Ջմեռնայս ուտեմ, զի կենդանաց ոչ յաղթեմ, իսկ զու. զի յաղթող եմ՝ անդանդաղ զայդ գործեմ:

Ջրանակալ իշխանս առական բամբասէ. զի զողոս պատժեն, և ինքեանք բռնակալութեամբ զնոյն գործեն, բոտ յանդիմանութեան առաքելոյ:

Մի. ՂԳ. 82.

Ո՞վքեր են այդ պատժող զողերը.— միայն հասարակ ժողովուրդը: Իշխաններն ինչքան եւ զողութիւն ու զրկանք անեն, հարիւրներ գործեն, նրանց համար դատ ու դատաստան չկա: Դատվողն ու պատժվողը միայն ժողովուրդն և: Ահա ձեզ Վարդանա առականներից մեկը.

Թէ ՈՎ Է ԻՇԽԱՆ ԴԱՏՆԼ.

Էր մեծ վանք մի. և հայր վանացն բարէկենդանին. Գ. ազգ ժողով արար և յետ ի յետ առն ծերոցն ի յետ և երիտասարդացն ի յետ և տղայոց ի յետ. և արար պատրաստութիւն և գնաց ի մէջ զիւրերն եկն տեսանել, թէ զինչ պակասեալ է, որ բերէ ևւ եկեալ յերգիւն ծերոցն և ետես. և գնաց ի բերել զպիտուս նոցա: Եւ եկեալ յերգիւն երիտասարդացն և գնաց ի բերել զպիտուս նոցա: Եւ գնաց յերգիւն տղայոցն ևտես, զի դեռալ էին. Ա. վարդապետ ի աղայոցն և. Ա. կաթողիկոս. և. Ա. եղբայր. և Ա. ստրկաւակ և այլն ժողովուրդը: Եւ հայրն միտ զնէր ևւ բմբունցին զմէկ աշխարհակայն ի մեղս և բերին առ սարկաւակն, և ոտքիւտակն ասաց, թէ՝ Երէցն աստ է և քան զիս մեծ է և ունի իշխանութիւն՝ առ նայ տարէք: Եւ ասբին ևւ երէցն ասաց, թէ՝ Սպիտկոպոսն աստ է. առ նայ տարէք. ևւ ասբին ևւ իպիսկոպոսն ասաց, թէ՝ Կաթողիկոսն աստ է, առ նայ տարէք: Եւ ասբին ևւ կաթողիկոսն ասաց. Վարդապետն աստ է. առ նայ տարէք: Եւ ասբին ևւ վարդապետն եզ կանոն և արժանացուց ապաշխարութեամբ: Եւ յորժամ զիշխանաւորքն բմբունցին ի մեղս, ժողովուրդքն ասաց, թէ՝ Ժողովրդեան չէ պարտ, որ զիշխանաւորն գատէ: զի ասնն զիրք աստուածայինք, թէ՝ Մարգ ամենայն, որ ընդ իշխանութեան՝ ի հնազանդութիւն կացցէ. մեկ ոչ է պարտ գատել. ինքն զիտէ և Քրիստոս:

Յուզանէ առակս, թէ ժողովրդեան չէ պարտ զիշխանաւորն զատէ. զի ոսկնայն իշխանաւոր աստուծոյ ազնիւ ծառայ է. և Քրիստոս հրամայէ, թէ Դու ով ես, որ զատես զայլում ծառայ. և ամենայն զիրք աստուածայեւնչք զայս ասնն:

Առ. Աբրդ. Բ. 164. ԺԼԷ

Դատելու ամենամեծ իրավունքը, ինչպէս կարելի չէ տեսնել, նույնիսկ կաթողիկոսից ավելի, պատկանում և վարչապետին, այսինքն միջնադարյան գիտնականին: Բայց սա իրավունք ունի դատելու միայն ժողովրդին, աշխարհականին, ռամկին: Իսկ յերբ իշխանավորն և հանցաւոր գործում, այդ ժամանակ իրը թե ինքը ժողովուրդն ասում և, թե ժողովուրդը չպետք և իշխանավորին դատի. «Ձի ամենայն իշխանաւոր աստուծոյ ազնիւ ծառայ է»: Բայց չի վոր հանցանքի մեջ բռնվել և այդ «ազնիւ»-ը:— Այո, բայց այդ «ինքն» գիտէ և Քրիստոս: Ուրեմն իշխանավորի դատը միայն աստված պիտի աշխի և վոչ ժողովուրդը, վոր իշխանութեան տակ լինելով, ասում և առակախոսը, պարտավոր և հնազանդ մնալ իր իշխանին, նույնիսկ յեթե նա գող ավազակ լինի:

Ի՞նչ պիտի լինէր դրա հետևանքով աշխատավորի դրութեանը: Բերենք Վարդան Այգեկցոյ իրեն առակներէց մեկը.

ՄԵԾԱՏՈՒՆՔ ԵՒ ՄՇԱԿՔ, ԻՇԽԱՆՔ ԵՒ ՇՈՒՆՔ ԵՒ ԹՈՉՈՒՆՔ.

Եւ զարձնալ այս չէ զարմացումն, ով ժողովուրդը աստուծոյ, թէ աստուած ի ձեռն մեղաւորի զայլ մեղաւորս որդոջ՝ դառնալ առնա՝ յուսով ապաշխարութեանն: Եւ զայս վասն այնորիկ ասնէ աստուած, զի տեսնէ մարդիքն և զնա փառաւորեցնէ և ոչ զմարդն. որպէս և ցուցանեմ ձեզ յայտնապէս և պարզ աբխնակաւ:

...Եւ արդ՝ ահա տեսանեմք զմեծատունսն, որ ի ձեռն մշակաց գործեն և փշովք պատեն և պահեն զայդիս և զզրախոսս. եւ ի ժամ ճաշակման ողիւղիցն և պտղոցն ոչ զմշակսն յիշեն և ոչ զփուշն, այլ տանուտեառն շնորհակալ լինին. և նմա կեանք և խաղաղական հայցեն յաստուծոյ նշանպէս և փառազարդ մեծամեծ իշխանքն ի ձեռն շանց և զիշակիր թռչնոցն որսան զերեսն և զթռչունսն: Իսկ ի ժամ ճաշակման պարարտ և ամուշահամ մսոյն ոչ զշունսն յիշեն և ոչ զթռչունսն, այլ իշխանին լինին շնորհակալ, և յաստուծոյ խնդրեն յերկար ժամանակաւ վարել նմա զիշխանութիւնս:

Առ. Աբրդ. Գ. 77, Ե.

Այսպէս ուրեմն այն աստիճան ընկած և մոռացութեան և արված աշխատավոր շինականի դասը, որ իշխանների համար գործող մշակները հավասարվում են այն շներին ու գիշատիչ թռչուններին, վորոնց միջոցով իշխանները վորս են առնում: Վայելում են իշխաններն աշխատավորի ձեռքի արդյունքը, և աշխատավորը մնում և քաղցած: Վարդան Այգեկցին՝ այդ պատմում և իրրե մի սովորական հանրամասնութ յերևույթ: Ուրիշ տեղ սաւկայն («Վասն զրկանաց») նա պաշտպանել և աշխատավորի իրավունքը դժուրքի սարսափներով զարնուրեցնելով մշակի վարձը կտրուկներին: Սոցիալական խնդիրներ, սակայն, նա չի հարուցանում: Բայց արդյոք կյանքի մեջ չկային դրանք:

Տեսնենք Մխիթար Գոշի առաջինն առակը:

Աստուած յանկնի երբեմն զարարած՝ երկեւ հակառակիլ. և խառնեաց զծանրն ընդ թեթեւն, զտկարն ընդ հզօրն. զի թէ հակառակ գարծցին՝ առ միմեանս, և ոչ ընդ արարչին:

Յրառել ասակս զթագաւորս՝ կարգել զմեծամեծսն և զնուաւստս ընդդէմ միմեանց, զի մի ընդ թագաւորս, այլ ընդ միմեանս պատերազմեսցին:

ՄՆ. Ա. 5.

Ըստ այս առակի, թագավորի կառավարութեան սխտեմն այն է, վոր նա «մեծամեծներին ու նվաստներին» իրար հետ կռիւնցնում է, վորպէսզի իր դեմ չհիշեն: Յեւ վարչութեան այս յեղանակը մի անհրաժեշտութեան է համարում թագավորական իշխանութեան դադափարախոս և մեծ իշխանների անձնական բարեկամ Մխիթարը, վոր խրատում է այդպես վարվել: Նա միշտ անդամ աստծու անուշով սրբագործում է այդ, պատճառաբանելով, թէ աստված ինքն էլ այդպես է վարվել արարչագործութեան ժամանակ:

Այսպես ուրեմն, իրար դեմ հանել «մեծամեծներին և նվաստներին» իայց անքնքր ևն դրանք:

«Մեծամեծքն» ազնւականներն են, ազատները, իսկ «նուաւստքը» — վոչ ազնւականները, անազատները, կամ «վար, ցած, խոնարհած, յետին, տառապեալ, չնչին, խեղճ» մարդիկը, ինչպես բացատրված է այդ բառը Հայկազնեյան լեզվի Առձեռն բառարանի մեջ: Թե այս բացատրութեանը ճիշտ է, յերևում է Մ. Պորենացու Հայոց Պատմութեան մի հատվածից (Ա. դ. ԻԻ.). այստեղ պատմագիրը յերգիչներից առնելով դժագործ և թագավորի դադափարական տիպը, վորի համար ի միջի այլոց ասում է. «Ոչ ընդ լաւագոյնս խանդայր և ոչ զնուաւստսն արհամարհէր»։ «Լաւագոյնքն» ազնւականներն են: Մ. Պորենացու ձեռագիրներին Ա. խմբի մեջ* «զնուաւստսն» բառի փոխանակ կա «զստրուկսն»: Կը նշանակե՞ հին ժամանակ նուաւս և ստրուկ բառերը հասկացված են իբրև համանիշ: Այդպես «նուաւստ» կոչվել է սամիկը, հասարակ աշխատավոր դասը, ինչպես այժմ էլ կոչում ենք վերին կամ բարձր դասակարգ և ստորին կամ ցածր դասակարգ:

Մխիթար Գոշը, ուրեմն, խրատում է, վոր թագավորն ազնւականներին ու հասարակ, աշխատավոր ժողովրդին իրար դեմ հանի, վորպէսզի չկարողանան թագավորի իրեն դեմ յելնել: Մի անգամ վոր Առականիւրն այդ է քարոզում, նշանակում է իրականութեան մեջ գոյութեւն է ունեցել այդ կռիվը, դասակարգային պայքարը, և հենց այդ է պատճառը, վոր Մխիթարը հանդես գալով իբրև թագավորական իշխանութեան դադափարախոս՝ ամենից առաջ, իր առաջին առակի մեջ հենց այն հոգացողութեանն ունի, վոր հեղափոխական շարժումն ուղղված չլինի թագավորի դեմ:

Կան արդոք այդ շարժումը:

Դասակարգային պայքարը տեղի չի ունենում այն ժամանակ, յիբր ճնշված, հարստահարված դասը գիտակցում է իր գրութեան վատթարութեան և իր շահերի հակադրութեանը ճշողների ու հարստահարողների դիմաց: Յեւ Մխիթարի առականների մեջ տեսնում ենք, վոր սամիկը շատ

* Մ. Պորենացու Հայոց Պատմութեան ձեռագիրները հնագույն ժամանակներից բաժանվում են յերկու խմբի: Տես «Մովսիս Պորենացու Պատմութեան Հայոց» աշխատութեամբ Մ. Արեղյանի և Ս. Հարությանի, Տփղիս. 1913:

լավ գիտե՛ք ի՞նչ տառապագի՛նք դրուժյունը: Նա գիտե՛ք, վո՞ր տերերն իրեն տանջում են, կաշի՞ն քերթում են վո՞չ միայն կենդանի ժամանակ, այլ և մեռնելուց հետո: Ուստի և նա ստիպված է թագնի՛ն տերերից:

Մեղադիր եղնն ո՞վն է, եթե՛ ղեմը՞ ի ջուր յաճախ գեղերիս: Այս ասաց. Զի ոչ շատանան զերկուորեա առ կենօք առնուլ, այլ և մահուամբ մերկ ի մորթոյ առնեն:

Զլարաց տերանց առաին ազգէ. զի կենօք տանջի և մահուամբ:

Մխ. ՂԶ. 83.

Աշխատավորն ի՞նչ տերերից վո՞չ մի լավ բան չի սպասում. մի՞նչ և ահա՛մ Առակախոսը խրատում է, թե պետք է ղզուշ լինել տերերից, զի նրանց բարքն աշխարհի յի, վո՞ր հույնիսկ «քաղցր» տերերը միշտ ել բարի չեն:

Հաւ ընտանի յեմբռնել ստացողին իւրոյ, յոյժ ազդագէր. և ոմանք մեղադիր լինէին, եթէ՛ զմէ վայրապար կռիւս ամբռնատ Որոց ասաց, թէ՛ Զարեուրիմ, զի ոչ յամենայն ժամու վասն բարւոյ ըմբռնէ. զի երբեմն ձլիթվայր կախէ, և բազում աւուր ճանապարհ տանի. և երբեմն ի վերայ կայծականց խորովէ և ուտէ:

Զբարս տերանց առակս յայտնէ, զի ոչ է յամենայն ժամու բարի ի նոցանէ գտանել: Թէպէտ և քաղցր իցին. այլ երբեմն և չարի ակն ունի արժան է, և ղզատտ կեալ, և պատրաստութեամբ վարիլ ընդ նոսա:

Մխ. ՃԻԵ. 106.

Ոնգճ մարդիկը տառապում են իրենց չքավորության մեջ և միևնույն մտածում են իրենց դառն դրուժյունը թեթևացնել, իշխաններն ու բռնակալ թագավորներն ավելի ևս տանջում են նրանց կոռ ու բեկարով և կոդոպետով: Կարգանք «աղօրփ արգաթ» առակը:

Այլ մի ազգատ երթար ի քաղաք մի. ի ճանապարհին հիւանդացաւ և աղաչէր դատուած պատրաստել նմայ գրատտ տանել ի շէնն. և ահայ դայ ոմն չարայբարոյ հարկանէր զնայ: Արի յոտն, առէ, և շարկէ գցուռակո. զի ոչ կարէ դալ զհիտ մաւրն իւրոյ: Այս յարեաւ և լար դառնայպէս. զի ոչ կարէր կանկնել. և այրն չարայբարոյ ոչ զաղաքէր ի հարկանելոյ զնայ: Այս նայ առէ. Վայ ինձ, աստուած իմ, փոխանակ թեթևացանելոյ ծանդրացուցեր զվիշտո:

Տուցանէ առակո, թէ ազգաքն տառապին վասն չքաւորութեան և խնդրեն ինչը և ստացուածք ի յատուծոյ. և թագաւորքն և բռնաւորքն, զինչ ունի, զան ալ կոդոպտեն և թախեն:

Առ. Վարդ. Բ, 196, ձկն.

Մարդիկ արգեն սկսել են դիտել սոցիալական անհավասար դրուժյունը և մտածել դրա մասին: Զրկանք կրողները դասակարգային գիտակցության դալով, բնակաճարար տրտնջում ու դանդաղում են իրենց վիճակից և աստժուց, վո՞ր հավասար չի տեսել մարդկանց, ինչպէս վո՞ր Զրիկն իր բանաստեղծություններէ մեջ դանդաղում է, թե ինչու պետք է՝

Մէկն ի պապոնց պարոնորգի,

Մէկն ի հարանց մութոյ լինի.

Մէկին հազար ձի ու ջորի,

Մէկին ոչ ուլ մի, ոչ մօքի, և այլն:

Առակների մեջ ևս «հանդգնում են» խոսել իշխանների դեմ, քննում

են նրանց գործերը, դատում են և շատ չարիքների պատճառը նրանց համարում (Եփեսոսի լինին վարույց իշխանաց, և բարդում պատճառս չարիաց դնեն նոցա)։ Այս արդեն հեղափոխական մտքեր են, իսկ հեղափոխական մտքերի գոյությունը վերջ դարաշրջանում՝ լինթագրում և արդեն հեղափոխական դասակարգի գոյությունը։ Կարդանք այս առակը։

Տրտունջ եղև անկոց ամենեղուն թագաւորն իւրեանց, թէ առաջ ընդ ինչոց զիւրաքանչիւր պատիւ զի զոմանս ի տունս ընակեցոյց՝ վորպիս զնարինջ, և զոմանս ի բուրառանս, և զոմանս յայգեստանս՝ և պատուին ի մարդկանէ, և զոմանս ի բրեւ զանաբզս ի վայրի զպտաբերս, որ և կերակուր լինին խողից և կոխան զազանաց, և զայլս յանառս՝ որպէս զմայրո, զսարգի և զնսնի և որ նման սոցին, զոր հարկանեն տնիսայ, և տնարը քարչանօք ի զնոււածս և յայրումն պատրաստեն նւնորա լուեալ կոչեաց զնոսա, և աստեալ ի վերայ նոցա առէ։ Ոչ զիտէք, եթէ զխորհուրդ թագաւորին ոչ ամենեքան գիտեն, որպէս և ոչ զաստուծոյն, և թէ այլ ևս յանգնէք, մեծագոյն ունիք պատուհասիր նւ զարուրեալ լուցին։

Հանճարեղս զմեզ լինել կամի առեալ, և հնազանդս աստուծոյ և թագաւորաց, և ոչ արտնջել զանճառ խնամոցն աստուծոյ, և ոչ զծածուկ խորհրդոց թագաւորաց։ այլ իւրաքանչիւր գործոյ ուշ ունել։ Զի ոչ եթէ վայրապար ինչ եղև կարելի ի թագաւորն անկոց զնոսա, որպէս և ոչ աստուած և ոչ թագաւորը տնօրինեն վայրապար, զի զոմանս յայգիս կարեացի պտաբերաց, և զոմանս ի բուրառանս, և զոմանս զնամացեղս յանառս, այսպիսի պատճառաւ զի զազանաց և անանոց կերակուր լինիցին, և մի նեղեցնեն զմարդիկ զասածեալս ի նոցանէ՝ ուսելովն, և թէ ի տունս ոմանք տնկեցան, անուտիլիք մանաւանդ են, ուստի համարին մարդիկ լինել ի զբոսանս տեսնան և ի բուրումն, զի կերակուր է բոլրեաց բուրումն, և տեսնան ի զուարեացումն՝ որպէս բուրաստանք։ Նա և ի բժշկութիւն եւալ՝ նւ այլ թէ տնտաւք ի շինուածս և յայրումն պատրանեցան, և այս նախախնամաբար, զի մի լինի՝ որ զպտաբերս հարկանիցեն ի շինուածս և յայրումն Այսպիսի և աստուծոյն անօրինի և թագաւորաց զանիւրէ և անքննելի դատաստանաւ, և թէ ոք յանգչնի անկարգաբար տեսի, զաստապարտի։

Մխ. Ի. 21.

Առակախոսը փորձում է «այլովոյնների» արտունջել լուցնել և քարոզում է հնազանդություն աստուծուն և թագավորներին՝ և նույն իսկ զատապարտում ու սպառնում է իշխանների դեմ արտնջողներին։

Կարդանք հետևյալ առակը.

Կարգեցաւ հրամանատար և ի թագավորն բուսոց ճակընդիկ ի վերայ բանջարաց իրբու. զտեսող յամարայնի ի կերակուր մարդկանն նւ խանդացեալ սեխ և ձմերուկ, և այլ պտուղք բանջարաց և պարտիզաց՝ թագի և շաղգամ և ստեպդին, և սկսան չարախօսել՝ եթէ աստաիկ ամենեւին է, և զոչոք որովայնի նւ գիտացեալ տրքայի նոցա, տանջել զնոսա հրամայեաց, եթէ զի յանգչնիք ընդդէմ իշխանի, զի հնազանդել պարտիք, և ոչ քննիք լինել, զի մի անկարգութիւն լիցի։

Յաժուցանէ առակս դյանգզութիւն մարդկան, որ դատիչ լինին վորուց իշխանաց, և բարդում պատճառս չարիաց դնեն նոցա. և ոչ իմանա՝ թէ այնորիւր լուծանին կարգք իշխանութեանն՝ մինչև ի բնաւիցն ժամանէ իշխանն աստուած։

Մխ. Ծ. 51.

Տրտնջացողներին ուրեմն տանջում են, վորովհետև վրչ վրք չպիտի հանդգնի իշխանի դեմ։ «Զի հնազանդել պարտիք և ոչ քննիք լինել, զի մի անկարգութիւն լիցի»։ Այդ քննությունը, ինչպիսի յերևում է Առակախոսի վերջին նախադասությունից, հնաստ է յեղել մինչև ամենքի իշխան աստուծուն։

Բոգբոքողները յերբեմն թագավորի սաստիկուց դարհուրած՝ լուծ են։

Բայց մի անգամ վոր մարդիկ սկսել են տրտնջալ իրենց վիճակից, այլևս հնարավոր չե լուկ խոսք ու խրատով լուեցնել և հնազանդեցնել բողոքողներին: Դասակարգային կռիվն սկսված է իշխանների ու նրանց բռնության յենթակա գյուղացիների միջև և առակագիւր վարդապետը, վոր իր կոչումով իբրև դատավոր՝ իբր միջնորդ և յերկու դասակարգերի՝ ազնվականութան և շինականության միջև, ստիպված է առերես դռն ամեն մեկին իր տեղն ու արժեքը տալ և քարոզել, թե՛ «ոչ ոք կարէ ճոխանալ առանց անվառից, և ոչ բարձրանալ առանց անարգից» (Մխ. է. 10): «Բնաւից կարօտ լինել մեծամեծաց և փոքունց առակս ցուցանէ, ոչ միայն թագաւորաց, այլ ամենեցուն՝ իշխանաց և այլոց աշխարհականաց. նմանապէս և յեկեղիցիս, զի պէտս ունին փոքունց և անարգաց» (Մխ. ՃԺԳ. 96):

Բայց դրանով բնավ չի բարվոքվում աշխատավորի վիճակը: Ինչ միութնաբուժյուն աշխատավորի համար, թե իշխող և իշխված դասակարգերն ել պետք են և իրենց արժեքն ունին աշխարհում, քանի վոր նրան կարգել են ինչպես Շամայրս ի շինուածս, զանտառն յայրումնս. քանի վոր նա աշխատում է, և ուրիշները վայելում են, իսկ ինքը միայն «այրվում է»: Այդ տանջվողները, մաշկվողները, ինչպես տեսանք, թաք են կենում իշխաններից և նույն իսկ մտածում են. «Ելցուք և մի դարձցուք առ նոսա». ճիշտ ինչպես մեր ժողովրդական վեպի՝ «Սասնա ծռերի» մեջ*) իշխանից դժգոհ ժողովուրդն ուզում է թողնել հեռանալ իշխանի յերկրից:

Սղեւ երբեմն տրտունջ անդոց, թէ՛ Վասն ծննդոց մեր ախտախմբ, և ստեամբ ժողովմբ կաթն, և մարդիկ ճմլեալ զպտկունս՝ առնուն ի մէջ զվաստակ մեր կցուք և այլ մի դարձցուք առ նոսա: Եւ մի ոմն ի նոցանէ իմաստուն ասէ. Ոչ է այդպես. զի զաւելորդսն քան զպէտս ծննդոց մերոց առնուն մարդիկ, և խնամն մարդիկ զմեզ և զծնունդս մեր, զի առնումք զատ՝ քան թէ տամք: Եւ ուստիք զայս՝ ուրախ եղնու:

Մտաւ առակս զբրթմնոյ սպասաւորս, որք շատ կարծին զինքեանցն քան զտերանցն դոր առնուն, այլ ուստիք իմաստնոց զխտն՝ զի սակաւ է ինքեանցն:

Մե. 2. 73.

Առակակախոսը փորձում է, ուրեմն, ուրիշ կերպ համոզել բողոքողներին: Աշխատավորները չպետք և տրտնջան, թե իշխանները նրանց աշխատանքը վայելում են, զի ազնվականները իբր նրանց աշխատանքի ավելորդ մասն են միայն առնում և դրա փոխանակ խնամք են տանում, պահպանում են նրանց:

Առակախոսը ձգտում է նույնիսկ համոզելու, թե իբր տերերի տվածը կամ կատարածն ավելի շատ է, քան առածը: Աշխատավորներն «իմաստուններից», այսինքն՝ հոգեւորականներից իմանալով այդ, հանգստանում են իրաւոժմանակ և նույն իսկ ուրախանում են միամտությամբ: Բայց դրանով չի վերջանում դասկարգային պայքարը:

Ինչքան ել աշխատավորները տգետ լինեյին, պիտի տեսնեյին, վոր

*) Մեր «Սասնա ծռեր» ժողովրդական վեպը, ինչ վոր պատմականն է վերաբերում, իր վերջնական հորինվածքն ստանում է մինչև 13-րդ դարի կեսերը: Տես Մ. Աբեղյանի, Հայ ժող. վեպը, Թիֆլիս, 1908. այլ և «Ազգագրակ. հանդես», գրքեր 13—17, 1906—1908:

կան շատ իշխաններ, վորոնք աշխատողներին կերակրվում են, բայց իրենց հարկատուներին վոչ խնայում են և վոչ պահպանում զայլերի ու զազանների դեմ, այլ, ընդհակառակն, իրենք զայլ զարձած տանջում են նրանց, կամ ինչպես Ֆրեկն ասածուն գիմելով՝ ասում ե.

Իշխան զբոնր ևս մէկ մէկի,
Քան զքանասար զայլ ոչխարի...

Գարդանք Մխիթարի հետևյալ առակը.

Ինկեալ անիծու ոսք՝ արտնջէր զքնաւ կենդանեաց, եթէ՝ Հարկատուք իմ էք, զի իշխան զազանաց եմ. ընդէ՛ր այժմ ոչ պատարագիք՝ զի զարմանեցայցի նւ ասեմ. Զի ի քէն ինչ ոչ դատք պահպանութիւն՝ ոչ յարջոյ և ոչ ի դայոյ և ոչ յայլ ինչ զազանէ. նա և ոչ գու. իսկ ի մեզ խնայեցեր. այլ մեզ պատարագել աստուծոյ արժան է, որ այգպիսի չարեաց գրեզ պատահեցոյց:

Յայտնի է առակին մեքք. զի չարք յառաջնորդաց յաջորդայնոց և յեկեղեցականաց՝ տանջելով զհնազանդեալսն և ոչ յայլոց պահեն ի վտանգէ. նւ ըստ արժանոյն անկեալք ի չարիտ՝ աստուծոյ գոհութիւն մատուցուք, զի ոչ ի մէնջ եղևւ:

Մխ. Զն. 76.

Իշխանները կործնում են մի ուրիշ կերպ ևլ արդարանալ:

Քոչունք առ հասարակ զազազակ բարձին, եթէ՝ Զար է իշխանս մեր արծիւ, զի միշտ ի մէնջ կերակրի՝ և յայլոց որսողաց ոչ պահէ նւ լուեալ ասաց, եթէ՝ Զինչ քան զայն ձեզ բարի, զի երկու ծնանիմ որդի՝ և զմինն ապականեմ, զի մի ծանր ձեզ եղէց. և մերձ լինելով իմ՝ ոչ ոք կարէ որսալ զձեզ, և այլ ուրեք յանպատրաստի զձեզ գտեալ՝ որսան. զուր զինէն ամբաստանէք:

Ըստ առակին սովոր են առնել թագաւորք ամինայն. առ իւրեանս ունել որդի՝ ժառանգ թագաւորութեան, զի մի պատեառ կործանման իցին յաշխարհի. և ի մերձ կեալն նոցա՝ չիշխէ ոք գործել չար:

Մխ. ԶԺԴ. 97.

Ձեզ համար դրանից ավելի ինչ լավ բան կա,—ասում են թագավորներն աշխատավորներին,—վոր յերկու վորդի յեմ ծնում, բայց մեկին սպանում եմ, վորպեսզի ձեզ վրա չծանրանամ: Այն, վոր արևելյան թագավորներն իրենց վորդիներին, բացի թագաժառանգից, կոտորել էլին տալիս կամ հեռացնում իրենցից, Առակախոսը բացատրում ե, ուրեմն, իբրև թագավորի բարեհոգության նշան, վորպեսզի իբր չճանրանա՝ աշխատավորների վրա, և կամ աշխարհի կործանման պատճառ չդառնա: Բայց ուրիշների և հայ Արշակունյաց այդ սովորութիւնից վոչ վոք չեն խաբվիլ ի հարկէ, ուստի նույն առակի մեջ ավելանում ե նաև հետևյալը. «Եւ մերձ լինելով իմ ոչ ոք կարէ որսալ զձեզ, և այլ ուրեք յանպատրաստի զձեզ գտեալ՝ որսան. զուր զինէն ամբաստանէք»: Կը նշանակէ, թագավորը կամ իշխանն իրավունք ունի վայելելու աշխատավորի վատակը. բավական ե միայն, վոր նրա նվաճու տակ ապրելով՝ այդ աշխատավորն ուրիշներից այլևս չի կեղեքվում. «Եի մերձ կեալն նոցա՝ չիշխէ՝ ոք գործել չար» (Մխ. ԶԺԴ. 97), ասում ե Առակախոսը. եւ յեթե այդպես չի լինում, յեթե ուրիշներն ել կեղեքում են, զրա մեղքն իբրև թե իշխանինը չի: Բայց արդոք հավատա՞մ են դրան: Աշխատավորները բողոքում են, «Զար է իշխանս մեր... զի միշտ ի մէնջ կերակրի և յայլոց որսողաց ոչ պահէ»:

Այդ չար իշխանն անա, ինչպես վերևում բերված Ձեռնառակի մեջ, մի որ թուլաշուում, ընկնում է, և հպատակներն ընդվզելով նրա դեմ, հնարավոր են գտնում հարկ չտալ. ուստի և դադարեցնում են հարկատվությունը: Վորի կողմը պիտի լինի այժմ Առակախոս Մխիթարի համակրությունը: Նա գոհ է, վոր ընկնում են այդպիսի չար ու տանջող իշխանները, լինին «յառաջնորդաց յաշխարհայնոց և յեկեղեցականաց»: Բայց և այնպես նա ավելի ևս գոհ է, վոր չար իշխանները ժողովրդի ձեռքով չեն, վոր պատժվում են. «Նւ ըստ արժանոյն անկեալք ի չարիս» Աստուծոյ գոհութիւն մատուցուք, զի ոչ ի մէջ եղև» (Մխ. Ձե 76): Ուրեմն դարձյալ նա չի մոռանում իր դասակարգը և չի ուզում, վոր աշխատավորի ձեռքով պատժվի չար իշխանը: Նույնը նաև Վարդանա առակների մեջ (Գ. ԽԸ, յեր. 107): Յեղ վոչ միայն այդ: Ազնվականության դադափարախոսը, հակառակ ժողովրդական առածի, թե՛ «գեղ կանգնի, գերան կը կոտորեն», խրատում է, թե տկարները, ինչքան ել թվով շատ լինեն և միաբան, չեն կարող հզորին հաղթել, և թե խելոքություն կը լինի, վոր այդ ապստամբ տկարներն իրենց ուժը համեմատաբար պակաս ուժեղի, այսինքն՝ յերկրորդական իշխանների դեմ փորձեն:

Ժողովեալ երբեմն աստեղաց՝ ասեն ի նոցանէ ծերագոյնքն. Մեք շաղուք եմք, զիմրդ զաիւ և զգիւրբ ոչ լուսաւորեմք նման արեգական և լուսնի: Ասէ ո՞նք. Զի ոչ միաբանութեամբ վարիմք: Եւ խոնարհեալ միաբանութեամբ նախ հերքել զարեգակն, և ի ծագել լուսնի՝ պարտեցան և ասեն. Այսպէս ի մամնէ աղօտացաք, զի՞նչ և յարեգական ծագելն լինուք: Եւ զզջացեալ զպարտութիւն խոտովանեցան:

Խրատէ առակս, Թեպեւ և ըստուք իցեն՝ և տկարք, հզորի յաղթել ոչ կարեն. իմաստութիւն է՝ այլ եւս տկարէ. զփորձ անուշ՝ և զղշանալ. որ և թողութեան է արժանաւոր

Մխ. Ե. 7.

Մխիթարն ինչքան ել մի կողմից տկարներին խրատում է չապրատամբել հզորներին դեմ, մյուս կողմից սակայն հզորներին ել զգուշացնում է տկարներին:

Ջրոյն մըջեան արջ փորէր և լեզուաւ ժողովրդ և ուտէր. և հնարի մըջիւն աստակել զնա. երթեալ առ պիծակ և գոռիւ և մժիւ և շանճանն և բքէա և առ նմանք սոցին. և աղաչէ օգնել իբր աղային: Ծափակցեն՝ հարկանն զաչս և զյսելիս արջուն, և հարկանն գլուխ զբարի, և նիւխ և որդունք եւս ծնանին. և ի սաստկութենէ ցաւոց զերբան բացեալ գոչէր եւ նոցա մտեալ յորովան՝ խոցոսեն զաղիւն. և նեղեալ զիմէ ի հոսան ջրոյ, և անչափ ի ներքս մտեալ՝ հեղձանի:

Զօրութիւն ասակիս այսպիսի է. զի հզօրք զտկարս արնամարենն, և ոչ երկնչին սակայն իմաստութեամբ զօրանան փորենք, և յաղթեն հզօրաց: Եւ այս իմաստութիւն է ի փորոնց իբրեւ ի մեծամեծաց երկնչի:

Մխ. ԷԾԴ. 124

Ի՞նչու իշխաններն ել չար չեն ըստ Մխիթարի. կան և այնպիսիները, վորոնք իրենց բերդերի մոտ տեղ են ապրիս ժողովրդին ապրելու և իբրեւ կռիվող պաշտպանում են նրանց ավազակներից ու ասպատակավորներից: Յեղ այս անում են նրանք իբր մի բարեգործություն, իբր մի բարեպաշտական գործ, վշտակցելով տկարներին և փոխարենն իբր թե միայն աղօթք ու մաղթանք ստանալով իրենց վողջության և հոգու փրկության համար:

Երամ ճշմարիտ երթեալ առ արագիւն և ազաւեալ զնա ասնն. Ի բոյն քոյ տեղի մեզ ապցես հանել ձագս, և յօձից դձագ մեր պահեսցես և և նա ասէ. Զինչ ինձ առնիցէք, զի պայք ձեզ առնիցեմ և ասնն. Աղօթս առնեմք, զի ձագք ձեր առողջութեամբ անանիցին ի փառակարութենէ՝ օգոյ, և ի հանգեթեալսն իննաց արժանի լինիք յաղաքս արդարութեան ձերո և յաղաքս այսորիկ տեղի ետ նոցա և և եղև ի հանել նոցա ձագ, սողաց օձ առնու ի նոցանէ, և տեսեալ տառեղան՝ եհար սասականաց զօձն. և ըրէր և և շուրջ ի սահմանսն միանգամայն սատակել զօձն յաղաքս փրկութեան նոցա:

Զվշտակցութիւն առակս ուսուցանէ տկարաց՝ յերկաքանչիւրսն վայելել փրկութիւն՝ սակա բարեգործութեան նոցա:

Մխ. ՃԻԲ. 103.

Վարդանա առականքի մեջ, սակայն, այդ պաշտպանությունը չկա: Մխիթարի այդ առակն այնտեղ փոխվել և այնպես, վոր իշխանն այլևս չի պաշտպանում իր հովանուն և ապաստանող ժողովրդին, այլ միայն իր զվարճությունն և անուամ. նա ժողովրդին խարում և, ըստ առակի առասպելին, իրրե թի ողնել չի կարողանում նրան, թեպետ կամենում է:

Ման բոչուցի յնվ արագիւ:

Ժողովեցան մանր թռչունքն և աղանցին զարաքին, զի զիցն զըսն իւրեանց ի ներքոյ բնին արաքիւ և և կեալ աւճքն բնականն ի խելան, զոր կուտեալ էր արաքին ի բունն իւր և և սկսան բարոյել զնորածին ձագն մանր թռչնոցն և և արաքին ունի սովորութիւն, որ տանի զգլուխն յետ ի վերայ թիկանցն և զկողնցն կլկլցնէ իրրե զձնձղայս. և կործին մանրածագերն, թէ ապառն (ապառնէ խղճալ, ափսոսող, ցավել) գմեք. և ասէին առ նա, թէ՝ Շատ շնորհակալ եմք ընդ զի թէպէտ և աւանդ ոչ կարես, արածակից լինիս մեզ:

Նշանակէ առակս, թէ թագաւոր ոմն կամ իշխան ոչ կարէ աւանդ ժողովրդեանն և պահել ի թշնամեաց. այլ զհարկն յաւելորդ պահանջն ապրտացն և ինքեանք փափկանան. նոյնպես և հոգեոր առաջնորդքն, զի խնամ ոչ տանին հօտին և ոչ հոգան զբորոտն զհիւանդացեալսն մեղօք, այլ զգէրն զննն և հարողմն պարարանան:

Առ. Վարդ. Բ. 198. ՃԿԵ.

Ըստ առակի խրատական մասի, ժողովուրդն արդեն պիտե, վոր ազնւրականությունն այլևս անպետք է և ավելորդ է և զուր ծանրաբեռնություն: Նա միայն փափկանում և իր անձն և պարարում: Այսպես և հոգեվորականությունը:

Բայց այդ չէ միայն:

Վարդանա առականքի մեջ, վորոնք ժամանակով ավելի ուշ են, աշխատավոր շինականի այս դասակարգային պայքարն ընդդէմ ազնւականի՝ մի վորը ավելի յն շարունակվում: Աշխատավորն այնտեղ արդեն կատարելապես զիրականում և իր արժեքը, իր շահերի հակադրությունն իշխանների դիմաց: Նա ըստ արժանույն զնահատում է այն թագավորներին, իշխաններին ու պարոններին, վորոնք վտակով ու արծաթով զարդարուն ձիերի վրա բազմած ման են գալիս և ապրում են աշխատանքով մշակել, վոր չարչարվում և հոգնում է աշխարհը շին պահելու համար: Ուսումն են իշխանները և յերախտամոռ լինում. հեծնում են ձի և միայն աշխարհ ավերում:

Ենգն յնվ ձիս

Ենգն և ձին խաւեցան ընդ միմեանս: Ասաց ձին ընդ եզն, թէ՛ Դու հի ես կամ զինչ պէտա ես: Ատէ. և և ձի եմ, որ թագաւորք է իշխանք և պարոնայք կազմեն զիս ոսկով և ար-

ծախով և բազմին ի վերայ իմ Ասէ՝ եղն. Ասէն աշխարհիս շէն եմ ես, որ վաստակիմ և չարչարիմ և խոնջիմ. և ապա դու և ջու թագաւորն ուտէք. և ամենայն մարդ զվաստակս իմ ուտեն. եւ թէ ոչ զվաստակիմ, դու և ջու թագաւորն մեկ հետ մեռանիք. և դու երախտայմոռաց մի լինար:

Յուցանէ առակս, թէ մարդ կայ, որ աշխատի քան զեղն, և մարդ կայ, որ համապաղ զձի հեծնի ու աւեր անէ աշխարհի. և թէ աշխատաւորն ոչ աշխատի, որպէս զեղն. նայ մեռանի ձին և հեծնող նորա:

Առ. Վարդ. Բ. 151, ձիէ

Ազնվականն, ուրեմն, այլևս վոչ միայն անպետք է, այլ և պարապորդ, ավերածու:

Այս գլխակցությունն այնուհետեւ մինչև այժմ էլ մնում և մեր աշխատավոր ժողովրդի մեջ: Ինչքան էլ իրականության համապատասխան է յեղել առածը, թե «եւր դատի, ձին ուտի», բայց և այնպես ժողովրդական առակը, վոր յես գրի յեմ առել 1885 թ. Աստապատ գյուղում*), ասում է.

Վոսկե թամբով ձին բռնած յեղան ասով.

— Յես ձի յամ ձիավորին,

Վոսկե աթոռ ամ թագավորին:

Յեզն ասով.

— Յես յեզն ամ յեղնավորին,

Վոսկե աթոռ ամ որդւորին.

Յես չդատեմ արան ու դարին,

Հառառնին (աղաափեբը) պոչիդ տակին կըարվին:

Այսպես ուրեմն, վերջ ի վերջո աշխատավորը, յերկրագործ շինականն ավելի բարձր է դասվում, քան նրան կեղեքող ազնվականությունը: Յեւ այլապես էլ չէր կարող լինել, քանի վոր առակներն տեսակը, ինչքան էլ հոգեւորականի ձեռով դրված, իր արմատներն ունէր աշխատավոր դասի մեջ և առակներն խկապես նրա գրականությունն են: Հինց այդ պատճառով էլ դրանց մեջ տեսնում ենք այն կռիւլը, վոր կեղեքված աշխատավորները վարում են ազնվականության դեմ:

*) Տպված է Տ. Նափասարյանի «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի մեջ. յոթներորդ դիրք, Թիֆլիս, 1891, յեր. 85.

Ավելորդ չի լինիլ այստեղ գրել և հետևյալի մասին Հին Նախիջևանի մոտ գտնված այս Աստապատ գյուղում, վոր այժմ ավելի Թագադեղ են անվանում, նույն 1885 թ. տեղի յե ունենում ագրարային ջարժում: Գյուղի հողերի սեփականատերերն իրենց գյուղացիներն են յեղել պարսից ժամանակ. բայց ուստաց տիրապետության որով կառավարությունն այդ գյուղը կալված է տալիս Նախիջևանի խաներին, վորոնք 30-ից 7-ը բարա էյին առնում ամեն բանից: Գյուղացիք պարտավոր էյին խաների բաժինն էլ կալել և այն և իրենց հաղով փոխադրել Նախիջևան նրանց ամբարները: Գյուղում կար չափազանց մեծ ստեղծագործչություն (1914 թ. գյուղի բնակիչներն թիվը 5000-ից ավելի յեր): Գալվածատերերը վոչ մի բանով չէյին մասնակցում գյուղի հանրային կարիքներին: Յեւ ան այդ կեղեքված գյուղացիները մի հաղաչափի աղիատացիայով, ապստամբում են նրանք հալածվելով յեկեղեղները՝ յերդվում են վոչ մի բարա չափ խաներին: Հետեանք սովորականն է լինում, կառավարությունն իսկույն հիսուն կողակ «եքեղեկեցիկ» յե դնում գյուղի վրա և 300-ից ավելի աղամարդ հալածում լցնում Նախիջևանի բանառը Կոզակները վեց ամիս մնում են գյուղում՝ ապրելով գյուղացիներին հալվին և ամեն տեսակ անկարգություններ անելով: Բանառերկամներն յերեք

Առակները լինելով ամենից առաջ քաղաքացիական գրականություն, բնակաճարար, նույնիսկ Մխիթարի խմբագրությունում, իրենց հյուսիս առում են նաև քաղաքացիների կյանքից, Այսպես, որինակ, Մխիթար Գոշի առակների մեջ հանդես են գալիս առանձնապես արհեստավոր քաղաքացիները — հյուս, դարբին, կտավագործ, կարող (գերձակ), պղնձագործ, յերկաթագործ, արծաթագործ, վոսկեգործ, խաղախորդ (կաշեգործ), մորթեգործ, բրուտ, կոշիկակար, շինողություն: Բացի դրանցից, կան նաև տեկագործ, վաճառական և այլն: Այս արհեստավոր մարդկանց մեջ տեսնում ենք մի խումբ մրցություն: Հաճախ վեճ և ծագում, թե վորի արհեստն և ավելի բարձր:

Այսպես, որինակ, Մխ. ՃԿՆ, 133, դարբնին առավելություն և տրվում հյուսներից. ՃԿՆ 134, յերկաթագործը գերադաս և պղնձագործից:

Արքային Սոփոմոն հանդերձ ոմն կարէր արուեստի սքանչելի և յոյժ ուրախացալ պանծայր. և բենեղագործն ընդդէմ դիւրն յարգէ արուեստը նւ լուեալ արքայի կոչեաց զնոստ և ընտրեաց ի մէջ նոցա, թէ տնկազմ է կտաւ առանց կարողի. սակայն զո՞ կարէ արուեստին, եթէ չիցէ արարեալ կտաւ. զի և Աղամ զտրեւ եղիտ և արար հանդերձ: Նւ այսու առաջին ցուցաւ կտաւագործ քան զկարող:

Ամենայն ուրեք առակ տնայրաւ ցուցանէ զկտաւագործ, զոր բազումը այդպնեն: Մխ. ՃԿԶ. 133.

Այս առակով կտավագործն ավելի բարձր է, քան կարողը, այսինքն՝ գերձակը: Շատերն այսպանում են կտավագործին, բայց թե նա վորքան գիտակցում և իր արհեստի արժեքը, այդ տեսնում ենք ներքևում գրված առակից՝ Տամբատեցի կտավագործի մասին:

Մազըն ու այսպանումը տեսնում ենք և ուրիշների վերաբերմամբ. խաղախորդը մորթեգործին և այսպանում, և սա նրան (Մխ. ՃԿԹ. 135). ուրիշները կոշիկակարին (Մխ. ՃՀԱ. 136): Այս ցույց և տալիս տարբեր համբարությունների վերաբերմունքը միմյանց:

Տեսնենք մի ուրիշ կոպմ — տարբեր վիճակների կամ դասերի հարաբերությունը: Այսպես Մխ. ՃԿՆ 132 առակի մեջ դարձությունը, քաղաքացու արհեստը, նախամեծար և դասվում, քան յերկրագործությունը, շինականի պարապմունքը: Դա քաղքեյների կարծիքն է: Այդպես չի մտածում, սակայն, ինքն Առակախոս Մխիթարը. ամեն արհեստ ու պարապմունք, ժամանակին նայելով, կարող է ավելի մեծարելի լինել:

Ի թողաւորին ոսկի խնդրէր երկրպագութիւն յամենայն նիւթոց, և թողաւոր զանձն կոչէր, զի պատկեր եղեւ թողաւորի. և նովաւ. ամբարտաւանէր զործոցն եւս ի վերայ արծաթագործաց և այլոց. եւ ի գալն ամենեցուն՝ ոչ եկն ցորեան տակով. Դամ, մինչև նախ ինձ եկեալ երկիր պազանիցէ:

ամսից հետո արձաղում են. բայց մի քանիսը բանաում մեռնում են, ուրիշներն այնպիսի հիվանդացած լինելով, դուրս գալուց հետո չուտով մահանում են: Օնի այդպես վերջանում և այդ ազդեցության շարժումը:

Փոփոխելի առակն ցուցանէ գնեթականքս, զի ոչ միշտ պատուէն. զի յերբեմն մեծաբերի ոմն, և երբեմն անպատուի. վասն բազում անգամ վտանգի սովոյն նիւթք տմենայն խոնարհին ընդ ձեռամբ ցորենոյ: Նմանապէս և յայլսն է տեսներ. բոտ այսմ և յարուեստաբար պատահի, որովք չէ պարտ տմարհաւանել:

Մխ. ճիւղ. 134

Վերջ է վերջո ցորենը, ուրեմն դարձյալ յերկրագործը շինականն է, վոր չի յերկրագործում թթադավորի պատկերն՝ վոսկուէն և հպարտությամբ պահանջում է, վոր իրեն գան յերկրագործն: Դա շինականի կարծիքն է: Քաղաքացիների կարծիքը սակայն այդպես չէ: Քաղաքի և գյուղի միջև տեսնում ենք մի խուլ պայքար, վորովհետեւ քաղաքի տնտեսությունն ուրիշ բնություն ունենք, քան գյուղինը. քաղաքինը նոր էր, արագ բարձրացող. գյուղինը՝ հին, ընկած: Ասպետն արեղայի և գյուղացու հետ միասին, — գրում է Կ. Կառլցկին, — հանդիսանում էր արտագործական հին ավատական յանակի ներկայացուցիչը: Այս յերեք վիճակներից (դասերից) յուրաքանչյուրը ծառայում էր իրեն արամարանքի և ատելության առարկա մեծ քաղաքների բնակիչների համար... Քանի դեռ հեղափոխական էր մնում քաղաքացի բնակչությունը, ... նա թշնամիների դեմ կռւում էր կատակներով ու ծաղրներով: Հիմար գեղջուկը, դատարկապորտ տերտերը, իր աղքատության մեջ հպարտ ասպետը սերմած գործող անձերն են վերածնության և հաջորդ դարաշրջանների գրականության»^{*)}:

Այս միկնուէնը դառնում ենք նաև հայոց գրականության մեջ 150—200 տարով ավելի վաղ, քան յեւրոպական գրականության մեջ^{**)}: Մխիթարի մի քանի առակներին մեջ ծաղրվում են վոչ միայն հոգեւորականները, այլ և շինականները — մշակը, յերկրագործը, հողագործը: Մխ. ՄԳ. 54. «Ջխստոր Գալիթանս»^{***} Թիւրակէ կոչէր շինականաց. եւ լուեալ մշակի միտոյ, առեալ եկեր կայթիւ (= կողովով), և խելագարեալ կուրացաւ: Կամ հետեյալը. Մխ. ՄԴ. 54. «Եփեալ հողագործ ոք է պարտիզէ խրմէ զսոխ բազում, կարծելով զնա բանջար, և անկաւ յորովայնածութեան ախտս»:

Կան առակներ, վորոնց մեջ ևս ծաղրվում են խկապես հիմար գեղջուկները, բայց Մխիթարն, ինչպես յերևում է, զուշուրթյամբ, բնդհանուր ձևով «ոմն», «ոք» բառերով է պատմել: Այդպիսիներից են որինակ՝ Մխ. ՄԸ 56, ԿԱ 59 և ներքեում գրվածը: Վարդանա առակներին մեջ կա դրա մի փոփոխակը, վորի մեջ մի մարդ քաղաք է գնում մի եղ գնելու: Ուրեմն գյուղացի, վոր քաղաք է գնում: Դրա մի փոփոխակն էլ յես գրի յեմ առել 1885 թ. Աստապատ գյուղում: Այստեղ ծաղրվում են Դարաշամբի գյուղացիները, վորոնց վրա յին պատմում ամեն տեսակի զվարճալիքներ^{***)}: Աւեննք այդ

*) К. Каутский. „Томас Мор и его утопия“. М. 1924, стр. 41 հա.

**) Տես Մ. Արեւիյան. «Համառոտություն հին գրականության պատմության». Յերևան 1923 թ., յեր. 42—61:

***) Տ. Նավասարդյանց. Հայ ժողովրդ. հեքիաթներ, վեցերորդ գիրք, Թիֆլիս, 1890, յեր. 54—61:

յերեքն եւ տեսնելու համար, թի ինչպիս նույնը պատմվում ե տարբեր ձեւերով:

Ստեա ի վաճառի անփորձ որ զգամամն, և հարցեալ որ մօտն կային, թէ՛ Զինչ իցէց նւ. զիտացեալ իթէ աղետ որ է, ասեն, թէ՛ Զու է սիրամարգի: Սե նա հաւատարիմ կարծեա վասն նմանութեանն. և տարեալ եղ ի ներքոյ հաւու, զի կըցէ ձագ սիրամարգի: զոր ասեալ եկեր հաւու նւ յետ աւուրց երթեալ ի տես, և պատահեալ անդ ոսկի եղնակ՝ թռեաւ. և նորա նստեալ լայր, եթէ՛ Անժամ եկը, և անկատար դնաց ձագ սիրամարգին:

Զառակս այսպէս գիտեմք, զի յիմարաց զեղեցկութիւնն պատրոզ է՝ և հաւատարիմ դուրսութիւն կարծէ. այլ իմաստունք գիտեն, զի զեղեցկութիւնն անգոյ է, և զօրութիւնն ճշմարիտ
Մի. 4. 35

ՅԻՄԱՐ ՅԵՎ ԶՄԵՐՈՒԿ

Այր մի անմիտ և յիմար ունէր զանեկան մի և ասեալ զայն դնաց ի քաղաքն գնել էջ մի. չրջեցաւ ի քաղաքն և ի շուկայն և ոչ գտաւ մրոյ զանեկանի էջ: Սե եկն կրկն ի շուկայն, ետես մեծ ձմերուկ մի և ասէ Նրացմամբ. Զինչ է այս: Սե յիմարան վաճառականք, թէ յիմար է և ասեն թէ՛ Հնդկ իշու ձու է և հանէ հնգացի իշու էջ մեծագոյն. Սե նայ խնդալով ետ զգահեկան և էառ դնաւ Սե պնդեցին դնա, թէ պատրաստ տար զձուս, որ չէ բեկի և էջն ելեալ փախչել Սե ասեալ զձմերուկն սկսաւ դնալ զառ և վար ճանապարհ. և ոտն նորա զայն թակեցեալ և գերծաւ ի նմանէ ձմերուկն. և զլորեալ դնաց ի մէնջ թաւ անտառին. և նապաստակ մի վաղեաց ի յանտառէն և սկսաւ փախչել: Իսկ նայ կարծեաց, թէ բեկաւ ձուս և էջն ելեալ փախչել: Սե ի հետ մտեալ ձայնէր նապաստակին. Այ էջ հնգացի, վայ ինձ, մի փախչելու Սե ձայնէր. Քուսի՛, քուսի՛, ողորմեայ ինձ և դարձիր առ տէրս քո:

Յուցանէ առակս, թէ այսպէս յիմարեցան թաղաւորքն, քահանայքն, և ժողովուրդքն, և թափեցաք ամենեւեան ի խելաց և ի մտաց և գնեալ մաաք զսուտ և խարոզ կենաց աշխարհիս այսորիկ, որ նման հոգոյս և փաղչի ի մէնջ և նման երազոյ պակասէ. և ջրամբք բմբունել զհեղատութիւն և զմեզս աշխարհիս և դարձելի սերով և ցանկութեամբ միայնորեմք ի մեզս աշխարհիս և լինիմք ողորմելիք հոգով և մարմնով:

Առ. Վարդ. Բ. 105. 2թ.

Ահա դրա փոփոխակն եւ իմ զրի առած:

Մին շամբըցի կ'ընի, վեր կը կենա, կը դնա նախշված. կը տեսնա ձմերուկ ան ծախում, կ'առի.

— Եղ ինչ աք ծախումս Գտան.

— Երի ձմերանի յա, վոր եռի տակին թուփս դնես, քուսակ կը հանի:

Շամբըցու բեյինը կը մըննի, երկուսը կ'առնի, վեր կ'ուռնի, վոր դնա իրանց տունը: Ժամփին ձմերկնին վեր կ'ընկնեն, կը կտարվեն Դրբիկալուց մին քոլի տակին լպտարակը կը փախնի, եղ եւ կ'ընկնի յաննէն, կը կանչի հա.

— Զո՛ւ, յես քո տերանին ամ. չո՛ւ, յես քո տերանին ամ:

Դե լպտարակը հո եջ չի, վոր անկաջ գնի, կաղնի—կը փախնի, կը հեռվանա: Եղ շամբըցին եւ, մըտերը կախ, կըզնա կըհասնի իրանց տունը, կնկանը կ'առի.

— Ա՛ կնիկ, դնացիմ նախշված, երկու եռի ձմերանի առամ, վոր բերեմ դնեմ մեր էջի տակին, քուսակ հանեք, ճամփին վեր բնկան, կտարվան. ես շան վորդիքը ինձ խաբել ան մինը լակ եր, ես մինի եւ քուսակը դուս եկալ, ինձանե խրտնով, փախալով...

Մեր ժամանակի այս զվարճալիքին կցված ե իբրև շարունակությունս մի յերկրորդը, վոր սյատեղ չի բերվում:

Դյուզագու ծաղր ե և հետեյալը:

Այր ոմն կառաւորքոք բնակեալ էր ի Տամբատ, և իւր սովորութեան բարք էր՝ առ ի զօրացուցանել զորդին՝ ասէր. Թագաւոր եմք արուեստիւ: Սե ի հարցման որդւոյն՝ թէ՛ մի-

ՀՍԽՀ Գուտ. պատմ. ինտախ. աղբ.—3

պէս, ասաց. Մանգը ըւոյն իբր զՔաղ զնեմ ի գլուխ, և զստէ՛՛ իբր զսուր վերացուցանեմ, և ի գործ կտաւին իբր յաթոռ նստիմ, ընդ ոտնէջ ունելով պատուանդան, և զկտաւ ժողովեմ իբր աշխարհ հնազանդեցուցանելով. և ձայն սանդերն իբր զձայն փողոյ։ Եւ այլ ինչ ասացեալ այսպիսի։ Յայսմանէ ստիպէ զհայրն զգուստը թաղաւորին Գարսից խնդրել իւր. և երթեալ խնդրէր. և նորա զայրացեալ հրամայեաց սպանանելու Եւ դիտացեալ, թէ ի Տամբատայ և այլն, հրամայեաց ներել։

Յուցանէ առակս, թէ ներման արժանի է առ աստուած և առ մարդիկ անգիտութեամբ մեղանշելն։

Մխ. ճԿԴ. 131.

Մխիթարն այս առակի մեջ միայն հայտնում եւ, թե Տամբատում եր պարում իր արհեստով այնքան հպարտ կտաւագործը։ Բայց դրա մի պատմը՝ վածքը կա Վարդանա առակներէ մեջ։ Այստեղ այդ կտաւագործը Տանպատեցի յե, իսկ Տանպատը գլուղ եւ և այդտեղի մարդիկը ամենքը հիմար ու խե եւ։ Հայտնի յե, վոր կտաւագործութեամբ պարսպել են նաև գլուղացիք և մինչև մի հիսուհն-վաթսուհ տարի առաջ՝ մեր դաշտային գլուղներից շատերում ձմեռները գլուղացիք կտաւ եյին գործում։

Բերենք այդ առակն ևս ըստ Վարդանա առակների.

ՏԱՆԳԱՏԵՑԻ ԶՈՒՆԱԿ

Զուհակ մի ասաց, թէ աստուած զմարդն թաղաւոր է ստեղծեր. և նա այլ թաղաւոր եմ յիմ յանձինս. և տուք ինձ թագ և իմ մասուրայցս և առէյս ինձ հեծելք և ժողովուրդ, և երթամ խնդրեմ հնդկաց թաղաւորին զուստն ինձ կնութիւն։ Եւ զնաց առ Հնդկաց թաղաւորն և ասէ. Տուր ինձ զքո զուստն ի կնութիւն։ Եւ ասէ թաղաւորն. Ինչ մարդ ես և ինչ գործ ունիս, որ զիմ զուստն խնդրես Եւ ասէ. Զուհակ եմ Բարկացաւ և ասէ թաղաւորն ընդ զինուորացն. Տարէք և սպանէք զգաւ Եւ ասէ թաղաւորն. Հարցէք զայդ, թէ ուտի ինչ։ Եւ հարցին զնա. նա պատասխանի եւ և ասէ. Յարեւելից կողմ դեղ մի կայ. անուան Տանպատ այս Ասէ թաղաւորն. Թողէք զգաւ, մի սպանանէք. քանզի յիմար է. զի աշխարհն այն՝ ամենայն խե է։ Եւ արձակեցին զնա խաղաղութեամբ։

Յուցանէ, թէ մարդ որ անգիտութեամբ մեղք գործէ, նա խե լինի և խեղութեամբ գործէ. նա աստուած չի համարիլ զայն՝ ծանր մեղքն, այլ սակաւ համարի. որպէս ասաց Գրիգորոս, թէ՛ Որ ոչ գիտէ և առնէ, արքցէ զան սակաւ։

Առ. Վարդ. Բ. 293. ՄԴ.

Անցնենք այժմ յեկեղեցական դասին։

7.

Առակների մեջ ինչպես ազնվականութեան, նույնպես և յեկեղեցական դասի նկատմամբ փոխված և արդեն հայացքը։ Ձնայնելով, վոր Մխիթարի առակները գրել եւ մի հոգևորական, — առակներից մեկի մեջ (ՃԺԵ, յեր. 98) հեղինակն իր մասին հայտնում եւ, վոր հոգևորական եւ, քանի վոր նա քահանայների մասին խոսում եւ առաջին դեմքով, — բայց և այնպես նրանց մեջ պարզ յերևում եւ աշխարհականի, այն եւ վոչ ազնվականի վերաբերմունքը դեպի հոգևորականը, վոր և ապացույց եւ մի շարք առակների աշխարհական ծագման։ Ինքն Առակախոսն իբրև հոգևորական դեռ շատ մեծ կարծիք ունի յեկեղեցականների մասին. նրանք, ինչպես յերկինքը յերկրից, շատ բարձր են աշխարհականներից և լուսավորութեան աղբյուրն են։

Իրերը հայեցեալ ի բարձրութիւն լերանց՝ համարձակեցաւ լինել և երկին, և ոչ կարաց զլուսաւորութեան ընդ ինքեամբ առնել նման երկնի՝ և լուսաւորել:

Յանգրմանէ նշանակա զաշխարհական ոմանս, որ քեցացեալ ի ճոխութիւն իւրեանց, զքանանայից կամըն հափշտակել զպատել, սակայն լուսաւորին՝ քան լուսաւորեն, նման երկրի, զի լուսաւորի՝ քան լուսաւորէ:

Մխ. 2. 5.

Գահանայական տոհմը, ինչպէս աղքատ, բայց հոգեւորով հարուստ լինելով՝ արժանի յե Առականութի կարծիքով նույն իսկ Թագավորական տոհմի հետ համասարովելու:

Միասնութիւն առնել ընդ միմեանս կամեցան թիկնի և ձիթնի. եւ պանծայր ի զօրութիւն իւր իւրաքանչիւր որ, ձիթնի յարազուարճութիւն և ի պաղաւտութիւն, մանաւանդ զի պառակտեալ նրա ձիթնի և ձիթ նրա ի լուսոյ, և լոյս լուծիչ խաղաղի իսկ թիկնի ի բազմութիւն պաղոյ, և զի սաղարթ իւր նրա ի մեռածոց, զոր որդունք հնանին, յորմէ կերպար լինին, զոր Թագաւորք և իշխանք վայելին: Որում և զիմազրէ ձիթնի զգիւրեանցութիւն պաղոյ նորա, և զփառաւորն լինել հանգրծ, քան թէ հարկաւոր, և զի ի գիւրի մերկանայ, բայց լոյս ի գիւրի վառի: Ասէ թիկնի. Այլ ի սուսնեան շիջանի եւ տեսէ ձիթնի, թէ՛ Ոչ իշխանի, այլ յազգակիցն իւր խառնի. իսկ փառք զո ծաղիկնկէց է և անցաւորս եւ տառա պարտաւ թիկնի՝ և հայցէ լինել իրին:

Նշանակ առական տառաւոր է. զի Թագաւորական ազգ թէպէտ փառաւոր է, այլ երկրաւորքս ճոխանայ, որք հոսանաւոր են, որում թիկնիք է նշանակ իսկ քանանայական տոհմ թէպէտ և աղքատ իցէ, մեծապատիւ է հոգեւորք, և արժան է զուգի ընդ Թագաւորական տոհմի:

Մխ. ԺԳ. 14.

Բայց աշգրպես չի ժողովրդի հայացքը յեկեղեցականի վրա: Ինչքան եւ սա յերեւում ե դեռ կարգապահ և մեծ ազդեցութեամբ աւանդի վրա, ինչքան եւ կան նաեւ իսկական սևազգեստ կրօնավորներ, վորոնք մի անգամ վորոշած լինելով հեռանալ աշխարհից, միշտ սգավոր են ցնում և նույնիսկ կարճ ժամանակով չեն ուղում ուրախանալ (Մխ. ԺԴ, 112), բայց և այնպէս յեկեղեցականութեան ընդհանրապէս ընկած և պատկերանում: Հոգեւորականը նույնպէս հափշտակող ե, ինչպէս և իշխանը. ուստի նրա դեմ եւ պայքարում ե աշխատավորութեանը, և այդ պայքարն յերևան և զալիս հաճախ ծաղրով:

Նին ճգնավորական խտտակեցութեան ալիս վոչ միայն հարգանք չի վայելում և ազդեցութեան չի թողնում, այլ և, ընդհակառակն, ծաղրի առարկա յե:

Գնդաժողիկք և կորնդան և խորը՝ առուոյտ կապոյտ և սէղ և նմանք սոցին ծաղր եղեալ զցրնի՝ տէին, եթէ՛ Զի՛ է զի մեք զուարճացեալք կամք, և նա ծիւրեալ զեղիւնութեամբ: Եւ լուսեալ պատասխանեաց. Վասն զի անմիտք էք և աներկիւղ, ոչ խորհրք: Եթէ վասն մեր սուրբք արեն դերանդեաց. իսկ ես խոկալով յայսոսիկ՝ զարհուրեալ դեղնիմ:

Յայտնապէս ցուցանէ առակս, թէ յոյժ անմիտք են որ մոռանան, եթէ բնութեամբ մահկանացու է ազգ մարդկան. և պատրեալք յերեւելի ի մեծութիւնս՝ ծաղր առնեն զվարս երկւշաժամ և զիրօնաւորս. ուստի յանդիմանին ի նոցանց անմասնութիւն նոցա. և ինքեանք զիտելով զապականութիւն երկրաւորացս՝ ոչ պատրին, այլ ճնշեալ և երկիւղիւ մշտ ներդեւին:

Մխ. ԼԳ. 39.

Ծաղրում են ուրեմն կրօնավորներին կենցաղավարութեան ասելով,

թե՛ ինչու մենք ուրախ ենք և նա հայրամաշ և յեղել, դեղներ ի հարկե Մխիթարի համակրությունը ծաղրողներն կողմը չե, վորոնց նա անմիտ և համարում: Ծաղրում են կրոնավորներն վարք ու բարքը. նրանց գծծությունն ու ժլատությունը, և նույնիսկ պահանջկոտ են նրանց և վանականների վերաբերմամբ: Աշխարհականները հյուր են գնում աղքատ կրոնավորներն միտ, նրանց նեղլիկ քարանձաքները, ցույց են տալիս այդ դժխար տեղերն և միաժամանակ պահանջում են սլարարտ կերակուրներ և խորտիկներ:

Երթեալք ի Թոնոց ոճանք հիւր տատարկի և տեսեալ զնա աղքատ և գժում կրօնաւոր, և ցուցանէին նմա տեղի անձուկ և ի դէպ կրօնաւորութեան. մթանգամայն զանազան պահանջէն խորտիկս, զոր նա ոչ ունէր: Որոց ասաց. Ջերկաքանչիւրսդ հալառակ տեսանեմ միմեանց խորհուրդ:

Հստկորութւն աշխարհականաց առակս յայտնէ. զի կրօնաւորս տեսեալ, և զտեղի քարանձաւաց նոցա ցուցանեն, և զարձեալ զպարարտ կերակուր պահանջեն: Որոց խորհուրդն ընդգնեմ միմեանց. զի թէ յանձաւ բնակիցեմք որպէս նոքա, զիմիդ զանազան կերակուրք զնոստ զարմանիցեմք ըստ կամաց նոցա:

Մխ. ՃԻԷ. 107.

Կրոնավորները շատ անգամ բան չեն ունենում տալու. բայց և շատ անգամ ել պատահում են ախպիսի ժլատ ու գծծի կրոնավորներ, վորոնք դեղի համար ել բան չեն տալիս, և այդպիսիներն զլսին աշխարհականները խաղեր են սարքում. «Ոչ ետուր դեղոյ, ետուր փորոյ»:

Արջու ցաւեցին որովայն, եհարց զազուէս դեղ. և նա ասէ. Յայր բարեպաշտ է այս անուն դեղ, երթիցես անդ՝ և տացէ մեզր որ յոյժ ոգուա է քեզ: Եւ իբրեւ մերձ եղեւ ի դիւզն, և շունք անդէն փախուցին: Եւ սկսաւ մեղադրել աղուեսուն: Եւ ասէ աղուէս. Առանց զպրութեան է այրն, որ զքեզ ի շանցն ոչ ազատեալք՝ և ոչ ետ դեղ. և արդ եկ տարայց զքեզ առ կրօնաւոր ոմն հմուտ աստուածնդէն բանից: Իբրեւ ետես կրօնաւորն՝ սկսաւ թշտամանել զնոսա: Եւ աղուէսն եպոյց դժուտ մեղուեցին. և արջուն մտեալ՝ զմի եկեր փեթակ, և զմի առեալ զնայր: Եւ կրօնաւորն անխժանէր զաղուէսն, իբրեւ զպատճառ վնասուն: Որում ասաց, եթե՛ Տմարգութիւն արար քեզ զայդ, ետ անպարտ եմ. զի ոչ ետուր դեղոյ՝ ետուր փորոյ. և ոչ ետուր դեղ:

Աշխարհական իբրեւ զաղէտ անփնտա մտաց, և ի կրօնաւորէն վրէժ տաաւ իրաւացի. զի յորշուութենէ բազում աչապիսի պատահի վնաս ի նենգաւորաց առաջնորդութենէ, ի դաշտաբարոյ արանց:

Մխ. ՃԷ. 77.

Իրա պատճառն, անշուշտ, կեղծ կրոնավորությունն և, կեղծ բարեպաշտությունը, վոր հաճախ հանգրմանովում և Մխիթարից: Կրոնավորները կորցրել են իրենց խոնարհությունը (Մխ. ԻԵ, 29). կան ախպիսիները, վոր մահելց վախենալով, ախարհն՝ զինվորական ծառայությունից փախելով, ասում են, թե կրոնավոր են, բայց անապատում ապրելու փոխանակ՝ աշխարհում դատարկ շրջում են:

Բազէ զհետ մտեալ աղաւնոյ, և նորտ ազադակեալ ասէ. Պատարադ եմ աւերունի, մի ինձ մեղանչելու եւ նա ասէ. Պատարադն աւերունի ի աւերունի սեղանն իցէ, և ոչ ասա յոգս շրջելու եւ հարեալ եկեր զնա:

Դէմք առակիս առ այնոսիկ է, որ ի մահուանէ զանգիտեալք՝ ասեն, թե՛ զանձինս

տեսան նուրբեայք եմք ընտելել յանապատ. զոր ի դեպ իսկ ասէ՝ Թէ այդպիսեացդ տեղի կըօնաւորք են, և ոչ վայրագար չըջիլ յաշխարհ. որում ոչ խնայէ, այլ ըմբռնէ:

Մի. ճԺԶ. 99.

Այսպիսի կեղծ կրոնավորներ միշտ ել յեղել են. բայց 12-րդ դարում գրանց թիմն, անշուշտ, մեծացած և յեղել, վոր ներսես Շնորհալին իր Ընդհանրական թղթի մեջ հատուկ ուշադրութ յուն և դարձնում գրանց վրա: Դրանք յեղել են Քաղաքասեր և մեղկ կրոնավորներ, սիրել են Վանդկ ու լույծ կյանք, ապրել են քաղաքներում ու գյուղերում, մասնակցելով ամեն տեսակի ուրախութ յուններին. Շընդ աշխարհականս ընակեն ի գեւղս և ի քաղաքս և ի բանից բերանոյ դարշութ լինան... և յորովայնամոլութ լինս անպատկերաս և յարեցութ լինս անառակս:

Յեղել են, հարկավ, և այնպիսիները, վորոնք գնալով լեռը կրոնավորելու, չեն դիմացել տեղի դժվարութ յանն ու կյանքին և շուտով յետ են վախել աշխարհ՝ նորից իրենց հին կյանքին: Միևմիտի համակրութ յունն, անշուշտ, այսպիսիներն կողմն ել չեն:

Նրթեալ էջ կրօնաւորն ի լեռն. և դարձուրեալ ի դառութենէ տեղւոյն. և զի խրատին անհեղ լինել, աղաղակեալ փախեալ առելով ի Խառան ի Խառան. բրբեւ դւ ջերմէն է Խառան, և յայնմանէ եկն կրօնաւորիւր:

Ի դէպ այդ այս առակ այնոցիկ, որ յաշխարհէ և յանանական վարուց դան յանապատ, և դանդախեալ ի կրօնից և ի խրատու մշանձանց, դարձեալ գրմեն յաշխարհ՝ յընդոյ դառաջին վարան:

Մի. ճԺ. 91.

Շատ ուժեղ կերպով արտահայտված է արդեն աշխարհական կյանքի ձգտումն առակներն մեջ: Դանանայութ յան ուսումը, որոնք երգութ յունն ու սաղմոսն այլևս չեն գրավում, զի սուգ և տրամոլ յուն են պատճառում: Թեպետ դեռ գիտեն, վոր այս աշխարհի արամութ յունը հետո այն աշխարհում ուրախութ յուն և բերում, բայց և այնպես այդ քարոզին լսող, հետևող չկա: Մարդիկ ավելի սիրում են իրենց հոր արվեստը, ուրախ յերգը, խաղ ու պարը, ճերկբաւոր ուրախութեանց պատրանքը:

Մարեկ եւս գորդէ իւր յուսումն քահանայութեան. և նա ի սելնս և ի մրմունջս Թեւափոխէր: Նւ խրատէր քահանայն օրհներգութեանց և սաղմոսաց փոյթ տանել, յորմէ սուգ և զգոյն յոգի դործւ: Իսկ նա ի պար յաւելոյր, Թէ՛ Հօր իմոյ արուեստ ուրախութեան է պատճառ, իսկ քոյդ արամութեանն Նւ Թէպէտ ուսու յետոյ՝ Թէ արամութիւն այժմուս բերէ ուրախութիւն յետոյ, սակայն անյուր կողայ, դորձաւ ի տուն իւր:

Ջերկրաւոր ուրախութեանց ըզպատրանս առակս նշանակէ, որով դէպտարածն իմանան, եթէ ի յոգ վախճանի, որպէս և տէր իսկ ասաց. նմանապէս և հոգեւորն սուգ յուրախութիւն լանդի:

Մի. ճ1Գ. 112.

Այսպես ուրեմն, ինչքան ել տեսականն մեջ դեռ խշում և ճգնավորական հայացքը, գործնականն մեջ, ընդհակառակն, ուրախ կյանքը, աշխարհիկ վոդին և տերը: Նույն իսկ միայնակյացը սատանայի հետ պայման և կապում և նրա ողնութ յամբ յեղիսկոպոսական աստիճանին հասնելով յեկեղեցին դարձնում և գուսանական նվագի վայր:

ՈՒՅՏ ՄԻԱՅՆԱԿՆՅՈՒ ԸՆԴ ՍԱՏԱՆԱՅԻ.

Ասի յառակաց, թէ միակեց մի սատանայի ուխտ եղ, որ տարի մի է պահս կենայ, թէ զնա ի մեծութիւն հասուցանէ: Սատանայ յաձն էառ կատարել զինչըրուածս նորաւ Յորժամ վճարեաց զպահսն, շարժեաց զեպիսկոպոս քաղաքն, որ եղ զնա եկեղեցեացապահ: Եւ ի մէլս տարւոյն շարժեաց որ օրհնեաց զնա արեղայ: Եւ ի մէլս տարւոյն եղև մեռանիլ եպիսկոպոսին շարժեաց զթաղաւորն և զքաղաքացիսն առնել իւրեանց եպիսկոպոսու և յորժամ կամէր զգնատալորն: զի ժամ արասցէ, եկն սատանայ, ետ ի նա փոքրիկ չորեքաղի մի և ասէ. Իմ ամէն լաւն փոխաբէն, որ զքեզ յայդ մեծադոյն աստճանդ հասուցը, զայս արա. առ զայդ փոքրիկ չորեքաղիդ ի ծոցդ դըր: Եւ զգնատը ի վերայ հազըր և յորժամ ի բնն ելանես, նա մէկ մատաղդ ի վերայ մէկ լարն զարկէ ևւ այնպէս արարեալ պատրեալ եպիսկոպոսն՝ յանկարծակի հազարք հազարաց և բւրք բւրոց տասնադի և թմբիկ և սուռնայի և չանկի և չորեքաղայ ձայն հնչեաց՝ ի մէջ եկեղեցւոյն: Ջարհուրեցան թաղաւորն և ժողովուրդն և ոչ զոք տեսանէին հարկանող նուազարանացն: Հրամայեաց թաղաւորն բռնել զդուռն եկեղեցւոյն՝ և զւրաքանչիւր ոք մերկացուցանել և փնդել: Եւ այնպէս արարեալ ոչ զոք գաւն պատճառ, և մնաց թաղաւորն և եպիսկոպոսն միայն: Թաղաւորն ևս մերկացաւ և ոչ գտաւ առ նա ինչ: Եւ յորժամ մերկացուցն զեպիսկոպոսն, զարն ի ծոցն զչորեքաղն այն. և ի չարչարանս արկեալ խոստովան եղև զուրացութիւնն և զզաւրնս, զոր եղեալ էր ընդ սատանայ: Յայնժամ կապեցն զնա ի յագի ամենը ձեռն ի թուղն ի դաշտը. մանրամասնաբար կտորեալ եղև մարմին նորա: Եւ այնպէս աւանդեաց զգառնացեալ հոգին ի ձեռն սատանայի:

Տուցանէ առակս, թէ ով ոք սատանայի բարւոյն և ուխտն հաստայ, բաժին նորա վերջն այնպէս լինելոց է:

Առ. Վարդ. ՄԻԳ. 252.

Պակաս ընկած չե իր զոչաքաղությամբ և քահանանաների դատը: Առակախոսը քահանաների արդար իրավունքն և համարում, վոր միայն մեռելները ստացվածքը կողոպուտ անելով ապրեն և վոչ թե իշխանների նման նաև կենդանի մարդկանց ստացվածքը հափշտակեն անիրավությամբ. բայց իսկապես այդպես չի լինում:

Ձագը ասնն ցծնողս իւրեանց, թէ՛ Ընդէ՛ր նման արծուայ և բազէից՝ կենդանիս մեզ ոչ որոայը, այլ զմեռելոց ոսկերս բերէք մեզ ի կերակուր: Եւ նորա ասնն. Որդեակը, վասն այն արար զմեզ աստուած երկայնակեաց, զի ոչ զկենդանիս սպանանեմք, այլ զատմբ մեռելոցը, նման քահանայից՝ և ոչ ըստ օրհնակի իշխանաց՝ զկենդանեաց յափշտակեմք:

Արդարապէս վարը մեզ առակս կամի, ճշմարիտ և անկաւոր ընչուք մեռելոց: և ոչ զկենդանեաց անիրաւութեամբ յափշտակել, որով երկայնակեաց լիցուք յերկրի:

Մի. ՃԺԵ. 98.

Քահանաները սուտ ու կեղծ են. ծուլ են, խաբերա, միայն արտաքին ծեսերը կատարող, մատաղի յետևից ընկած: Աղվեսները լափելու համար քահանա յեն դառնում:

Եղիտ աղուէս գիրս ինչ. և զնաց առ ազգաս ոմանս, թէ՛ Քահանայ եմ ևւ կարգեցաւ. քահանայիւ. և յաւուրս տօնից բարձրաձայն աղօթէր, և յօժարադոյն զաղ օրհնէր, և ի յայլ աւուրսն հեղալայր. և ի լընիլ զենման մատաղայ, զարիւնն եւս լեզայր. և ի մեղադիր լինելն՝ ասէ. Նուրեալ է, և այդպէս արժան է առնել: Եւ ի լընելն յայտնի կեղծափրութեան նորա՝ զնաց դադաւ:

Մեկնապէս ունի առակս զմիտմն. զի կեղծաւորք՝ որ բնաւ չիցեն քահանայք՝ պատրեն գտիտաւ. և թէ միտ զնեն, ի դործոց իւրեանց յայտնին. և երեւելի լեալ զնան հալածեալք:

Մի. ՂԸ. 84.

«Հողերը առաջնորդքն... խնամ ոչ տանեն հօտին... այլ զգէրն զենեն և հարպովն պարարտանան» (Առակք Վարդ. Բ. 198. Ճկէ)։

Այսպես և Պրիկի «Գանդատի» մեջ քահանայի մասին՝

Բախտաւորն դայ ճօնկտալի,
Գայ և նստի յաւազ բարձի.
Լուծն ի փորին ի շուրջ անցնի,
Եւ ալելու մը չի գիպնի.
Բայց վասն մէկ աւուր տօնի,
Որ թէ դատիկ, այլ տօն լինի,
Նա խաչամարոյր իւրն շատ անկնի,
Մորթ և էրի և դաթանի։

Քահանաները, ինչպես և յեպիսկոպոսներն ազանությամբ նույն իսկ խոստովանության խորհուրդը դարձնում են յեկամտի աղբյուր, պոռնիկներին և պիղծ մարդկանց նախ յեկեղեցուց մերժում են վախեցնելով, իսկ հետո կաշառքով ընդունում են և հաղորդում։ Քահանան նույնիսկ անմեղ-
նելին մերժում և յեկեղեցուց, իսկ չարագործներին կաշառքով ընդունում յեկեղեցին (Առ. Վարդ. Բ. 257. Միջ)։

Ի տօնի սրբոյ դատին եկին Թաշուք ամենայն, և խոստովանութեամբ հաղորդէին օրինացն. եկին ընդ նոսա սակա և հոգամաղ, և խոստովան եղին քահանային, եթէ՛ Ոչ այլ ինչ գիտեմք խղճ, այլ զի որսացաք միլունս և դորտունս՝ և կերաք։ Եւ նա մերժեաց զնոսա պիղծ կոչելով։ Եւ երթալ որսացին ձազս սուբբս, և մատուցին քահանային. և այսու պատ-
րեալ արգարացոյց զնոսա սակելով. Ոչ զկտացիք խոստովանել, զի այն ժերացեալ և ի Թեւոց Թափեալ Թաշուք էլն։ Եւ հաղորդեցոյց զնոսա։

Ձազան քահանայից առակս տայ տարացոյց, զի զպոռնիկս և դայլս եւս պիղծս մերժեն յեկեղեցոյ՝ երկեցուցանելով, իսկ յետոյ դարձեալ կաշառք ընդունին պատճառելով բանս ինչ, և հաղորդեցուցանեն զնոսա։

Մի. ՃիԱ. 102.

Այսպիսի դրության ժամանակ բնականաբար հաջողություն պիտի ունենար Թոնդրակեցոց աղանդը, վոր ի միջի այլոց մերժում եր յեկեղեցու բոլոր խորհուրդները։ Հասկանալի չե, վոր մարդիկ, նույն իսկ հովիւները չցանկանային այլևս հաղորդվել։

Յաւուր դատիկ տօնին եկին հպատացեալք հաղորդել, և զոմն հովիւ բռնադատէին հաղորդել. և տեսեալ ի բաց փախեալ ասելով. Ոչ ճաշ է զի կերայց, և ոչ հրամենք։ Եւ ասեն. Այդքան է խորհուրդն։ Եւ ոչ հաւատէր առնուլ, այլ ի բաց դնաց։

Ձար ամենայն ուստեք առակս ցուցանէ զանգիտութիւն վայրենացելոց ոմանց, զի յե-
րեւելիս միայն հային և դայթաղվել։

Մի. ՃՀԲ. 137.

Առակախոս Միխիլարն այդ բացատրում և «վայրենացած մարդկանց անգլխությամբ», բայց իրականի մեջ այդ առաջացած և յեղել յեկեղեցա-
կաններէ բարոյական անկման հետեանքով։ Յեկեղեցու այդ խորհրդի ծաղրը յերևում և առակի պատմվածքից։ Նույն ծաղրը տեսնում ենք և մի ուրիշ առակի մեջ, ուր հովիւը զազաններէ կերածն և աստծուն մատաղ անում։

Ի ձեռաց շահնի յորտան դերձաւ ձազ հաւաքի, և ոստց. Նղիցի պատարագ տեսան։
Մաղր արոր զնա հաւաքն, եթէ՛ Ձոր ձեռք մատուցանես, այն պատարագ տեսան։

Ջնովուլն ձեւացուցանէ զբարս՝ առակս, զի զկերակրեալս զազանաց և զբեկեալս զայլոց՝ նուէրս տեսան ասէր լինել

ՄԽ. ՃԺԸ. 100.

Այսպէս և հին գուսանական յերգերի մեջ քրիստոնեական տաճարը ծաղրվում և նրանով, վոր սիրականներն իրենց սերը խանդարող աբլորին խորովում, ուտում են ու փեսուները տաճարին նվիրում։ Այդ հին յերգերի մեջ կան բազմական թվով այնպիսիները, վորոնց մեջ յերևում և անտարբերություն ղեպի յեկեղեցին. ծաղրվում են վանական սարկավագներն ու արեղաները, յեկեղեցու սրբերը, խորհուրդները և այլն։

Վարդանա առակաների մեջ ավելի զարգացած և քահանաների ընկած վիճակը. ուստի և սուր յերգիծանքներ են հորինված նրանց վրա։ Գող քահանաները յեկեղեցու վոչ մի սրբությունը չեն պահում այն աստիճանի, վոր զողացած կովը տիրոջից թաքցնելու համար նույն իսկ յեկեղեցու սեղանն են բարձրացնում և վարագույրը քաշում։

ԳՈՂ ՔԱՀԱՆԱՅ ՅԵՎ ԱՅԻ

Քահանայ մի զողացաւ զկով այրի կնոջ մի և էած ի յաթոռն. և կին յիմացաւ, և ասէ առ քահանայն, Տէր, ժամ է մահուան լոճոյ. եկ յաթոռն, որ խոստովանիմ։ Աւ յայն ժամ անցուց զկովն ի ներսի տուն և անդի ի ժամայտուն և անդի եկեղեցին։ Աւ ասէ կըն. Տէր, առաջի բեմէն պարտ է ասել զմահու խոստովանութիւն։ Աւ հանին զկովն ի բեմն և քարէցին զվարայդութիւն ի դէմ։ Իբրեւ մտան յեկեղեցին և նստան, յանժամ կին ի վեր կալաւ զվարայդութիւն և ասէ ընդ կովն. Ո՛վ զարեւիթ, զքեզ կով գիտէի. և արգ զքեզ պատարագաւ հօվ արար, ասայ ինձ։

Յուցանէ առակս, թէ այսպէս համբերութեամբ և իմաստութեամբ պարտ է առաջնորդին և վարդապետին զամենայն ինչ քննել. և ստուգել ամենայն քահանայս և յիմանալ զվարս նոցա և որ չէ արժանի պատարագի, ծածկայբար յանդիմանել և ոչ տայլ թուլ կրկն խաչել զորդին աստուծոյ անարժան պատարագաւ և հաղորդութեամբն. որ չէ բարի անարժանութիւն։

Առ. Վարդ. Բ. 73. ԾԴ.

Մենակյացները շնացող են (Առ. Վարդ. Բ. 69), նրանք եւ զորությունն են անուամբ և զողացած ապրանքը ծածուկ ծախում բոլորովին չնչին գնով, արդարացնելով իրենց, թե Գրիստոս ասել է՝ ձեր առաք, ձեր տվեք։

ՄԱՆԱԿԱՆԱՅ ՅԵՎ ՏԱՆԻ ԻՇԽԱՆ

Մեայկեաց մի եկ ի գիւղ մի քաղցեալ, և ոչ անկեալ նմայ հաց. և ել ի շէնէն և գտաւ զառնիկ իշխանին ձին, որ էր ի գիւղն. և աւնու զնայ և տանի ի միւս գիւղն. ետ և էառ հաց մաւ. Հասաւ իշխանն և ասէ. Ո՛վ մեայկեաց, ընդ է՞ր կարի առաւ տուեք զծանդրալդին ձին իմ ի մէկ հաց, իբրեւ գլխար։ Աւ նայ ասէ. Ո՛վ բարի իշխան, մի ընդ վար շատայաբանք. զի Գրիստոս հրամայեաց, թէ՛ ձեր առէք և ձեր տուէք։

Յուցանէ առակս, թէ պարտ է զայս ասել առաջնորդին և վարդապետին առ ժողովրդին, թէ համբերեցէք և մեր տամք զաւրէն աստուծոյ։

Առ. Վարդ. Բ. 73. ԾԴ.

Ապահովությունն ու վորկրամուծությունը հոգեւորականներին, այլ և աշխարհականներին ամենամեծ պակասությունն է. 15-րդ դարում Միլիտիչ Նազարը կոչվում է այդ ախտի դեմ իր վոտանավորներով. նույնը գտնվում է և Վարդանա առակաների մեջ։

ԱՐՏՈՒՏ ԹԱԳԱՒՈՐ ԹՈՉԼՈՑ

Ժողովեցան թռչունքն և ածին զարտուսն իւրեանց թաղաւոր. զի չէ զիշայկեր. և է արթուն և սաղմոսասաց կարգաւորն նւ սահմանեաց մշայբանութլւն և կարգեաց զլիխանս և զաւարայարս. և սկսան զնայ և զան ի զեղջի մի սահման նւ աղաքն եղեալն էին որազայթ վասն ձաղուց. և պատահեաւ որոզայթն առաջի արտուսին. և նայ էառ զնառ ցորենոյն. և բախտերքն անկաւ ի պարանոց նորա. և նայ անշնչացաւ. նւ եկեալ զաւարացն նանին զբախտերքն ի պարանոցէն և տսին. Ով բարի թաղաւոր և իմաստուն կարգաւոր՝ սաղմոսասաց արթուն. զի այս որ պատահեաւ քեզ՝ ինչ էր. նւ նայ ասէ. Ով բարի զաւրք իմ, որ աշահութլւն և յորովայնայմովութլւնն տարաւ. զիսէլքս իմ և զբժաստութլւնս. զի խորհեցայ ծածկայբար ուսել զնառ ցորենոյն վասն սովուս իմոյ, զի մի տեսցէ որ ի զաւրաց իմոց:

Յուցանէ առակս, թէ բազում սուրբ կարգաւորք և առաջնորդք կորնչին ի դժոխս վասն ազատութեան և յորովայնայմովութեան, որով զայթակեցուցանեն զտգէտսն և լինին ողորմելիք առաջի Բրիտոսի:

Առ. Վարդ. Բ. 33. ԻՁ.

Այս ամենի հետեանքն այն և, վոր ժողովուրդը սառել և յեկեղեցուցի. Այլ ևս ժամասեր չեն: Այլիւ սիրով զվարճություն անելու, զվարճալի տեսարաններ ժախի տալու յեն զնում, քան աղոթելու և քարոզ լսելու:

ԵՐԷՑ ՅԵՎ ԺՈՂՈՂՈՒՐԴ

Կայր էրեց մի ի զիւզ մի և խիստ սաղմոսասէր. և զեղացիքն ոչ զային ի ժամ. էրեցն երթայր ը առնա նոցա և աւէր, թէ՛ ի ժամ եկէր: Նւ նոցա ասէին, թէ՛ Գամբ: Նւ ոչ զայն: Նւ էրեցն որ մի սուտ խն եղաւ և զգաւազանն ի փրլոնին ծայրն ծալեց և ի վեր կալաւ և շուրջ զայր և զսայր: Նւ ասն զեղացիքն, թէ՛ էրեցն խեցաւ. երթամբ և ծրծաղամբ: Ժողովեցան այր և կրն և աղայ, մեծ և փոքր և եկրն առ էրեցն: Նւ ասէ էրեցն ցժողովուրդն, թէ՛ նստէր: Նւ նստան: Նւ ասէ էրեցն ցժողովուրդն. Ով մոլորեալք, քան որ սաղմոսէր և աղաթէր և ժամ տսէր, նա սատանայ կապել էր զսրբոն ձեր և քարացուցել. որ զժար թուէր ձեզ ժամ զարն: և այժմ սատանայի ձայնն եկիք շուտով լսել և ծրծաղել: Նւ բարկացեալ էրեցն ձեզ զփրլոնն և զնաց ի զեկէն:

Առ. Վարդ. Բ. 265. ՄԼՁ.

Մարդիկ այլ ևս հավատքի խնդիրներով չեն զբաղվում. գրեթե սառն և անտարբեր են զեպի այդպիսի վեճերը, վոր միջնադարի և յուսթյունն եյլն կազմում: Հայտնի պատմական տկի առակի մեջ՝ ճշմարիտ հավատը բնականաբար դեռ քրիստոնյաներինն և. բայց զա հոգևորականի տեսակետն և:

ԵՐԷԲ ԹԱԳԱՒՈՐԻ ՎՈՐԴԻԲ ՅԵՎ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԱԿՆ ՅԵՎ ԴԱՏԱՒՈՐ

Առի ի պատմութեանց, թէ կայր թաղաւոր մի և ունէր բազում նոխութլւն և Գ. որդի և ակն մի պատուական, որ առնէր բժշկութիւն: Նւ նա ետ նշան որդոց և ասէ, թէ՛ Յետ մահուան իմոյ, որ ունի զակս զայս, նա առնէ զթաղաւորութիւնս իմ: Նւ յորժամ մեռանէր ետ զակն ի միոյ որդոյ իւրոյ: Նւ Բ. որդիքն արարին իւրեանց ապակի ակն ի նմանութիւն այնմ ակնն և եկեալ փնէին ընդ մահմանս վասն թաղաւորութեան. և զնոցեալ առ իմաստուն զառաւոր մի առնել նոցա զատաստան: Նւ նա առեալ զակն եզ ի վերայ հիւանդին. և յայանեաւ ճշմարտութիւնն, և նա ետ զթաղաւորութիւնն այնմ որդոյն, որ ունէր զակն պատուական:

Առակն ցուցանէ զթաղաւորն ամենեցուն աստուած, որ ունի բազում որդիս ըստ արարչութեան և էտ զպատուական հաւատքն քրիստոնէից միայն. թէ որ ունիցի զայս, նայ է ժառանգ արքայութեան բոտ այնմ, թէ որ որ ձեռնի ի ջրոյ և ի հոգոյ, ոչ մտանէ յարքայու-

թիւնն աստուծոյ: Բայց քաղում մարդիկը ունին զձե հաւատացելոց, այլ ոչ ճշմարիտ հաւատն. քանզի այլազգ սքանչելիք ոչ լինին, բայց միայն քրիստոնէիք. զի սոքա ունին զճշմարիտ ակն. զի այնով ժառանգեցան զհայրենի արքայութիւնն:

Առ. Վարդ. Բ. 286, ՄՀԷ.

Ինչքան ել Առակախոսն ասելու լինի, «պատմական հավատքը քրիստոնյաներինն են», բայց և այնպէս աշխարհականը, նույն իսկ հոգևորականը շատ ել չի հետաքրքրվում դրանով: Առակը Վարդանա, ՃՅԲ, յեր. 168—172 «Քրիստոնեա և այլազգի, այլ և օրինակ վէճի յազադս հաւատոյ» առակի և իր վարկանտների մեջ դրվում և այն խնդիրը, թե վորի հավատն և ճիշտ, հայկ, թի՞ք ուրիշ քրիստոնյաների. հայկ, թի՞ք այլազգու, այսինքն մամեհականի Յեւ վատասխանն այն ե, թե «12 քրիստոնյա ազգերը» լծված՝ ամեն մեկը հավատի վեմն (վարկանտների մեջ՝ քար, լուսեղեն լեռ) իր կողմն և քաշում, բայց վեմը տեղից չի շարժվում:

Այլ մի դնալով ի ճանապարհի հանդիպեցաւ արանց, որը զճողանս կապեալ ի բուն վէճ մի. զի շարժեցեն զվէմն և առ ինքեանս քարշեցան. բայց յամենեցունց կողմանց քարշէին, կամելով իւրաքանչիւր ոք առ ինքն քարշել և իւրացուցանել: Իսկ քարն ամենինն անշարժելի մնայր և անխախտ Ասէ այրն. Ով մարդւկը, եթէ կամէր շարժել զդա ի տեղւոյն իւրմէ, ի միողէ կողմանէ քարշեցէ, զի շարժեցել. քանզի յամենէ կողմանէ քարշելով՝ զգա շարժել անհնարին է: Բայց նոքա ոչ կամեցան լսել նմա. այլ յամռանս քարշէին բոս սովորութեան իւրեանց. վասն որոյ քարն մնայր անշարժ:

Յուշանէ: Վէմն է ինքն Քրիստոս բոս Դանիէլի և Պօղոսի, իսկ քարւօղեն առ ինքեանս քրիստոնեայք. զի իւրաքանչիւր ոք ազգ քրիստոնէից կամի հակադասութեամբ զՔրիստոս առ ինքն քարշել, այսինքն իւրաքանչեանի. բայց Քրիստոս անշարժ մնայ և ոչ առ մի ոք դնայ, քանզի Քրիստոս ոչ կամէր զհակադասութիւն և զընդդէմութիւն հաւատացելոց իւրոց. այլ գտէր և զմիաբանութիւն նոցին, որովք շարժի Քրիստոս առ նոսա:

Առ. Վարդ. Բ. 171. ՃՅԲ.

Այսպէս և «72 ազգերն ել՝ ամեն ազգ լուսեղեն լիւր—աստված իր կողմն և քարշում, թե՛ յեւ եմ առաջ, բայց աստված ամենքինն և և անշարժ»: «Լուսեղէն լեռան աստուած է, և ՀԲ (72) լուծքն ՀԲ (72) միլաթն է: որ ամէն միլաթ դէմ իւր քարշէ, թէ՛ եւ եմ յառաջ և աստուածն ամենեցուն է և անշարժ»:

Այս ամենից, այս ազատախոհութիւնից արդեն շնչում և մի նոր վորդի, վորով վերջնապէս կազմակերպվում և աշխատավոր դասի հայացքը յեկեղեցու և յեկեղեցականի մասին: Նրա համար յեկեղեցականը նույնն ե, ինչ վոր ազնվականը: Նա հոգևորականութեան դեմ մաքառելով՝ վերջ ի վերջ իրեն ալիւի բարձր և դասում, քան հոգևորականին, թեպէտ և չի համարձակվում այնպէս կտրուկ խոսել նրա դեմ, ինչպէս ազնվականի դեմ: Յեկեղեցականը պատարագ և անում, մեղքի թողութիւն տալիս. բայց նա չէր անիլ այդ, յեթե չուտեր աշխատավորի վատասելը:

Բայց վերն և ալիւի բարձր, հոգեմբ, թի՞ք մարմնավորը: Կարգանք «եկեղեցի և ջրադաց» առակը.

Եկեղեցին պարճեցաւ իր սրբութիւն իւր և ասաց, թէ՛ եւ եմ տաճար աստուծոյ և յիս գան քահանայք և ժողովուրդք յազաւթս ժառուցանել աստուծոյ և պատարագ. և հաշար

աստուած ընդ աշխարհիս. և մեղաց թողութիւն լինի: Յայն ժամ դայ ջրադացն և ասէ ընդ եկեղեցիքն, թէ՛ ԶԷնչ դու առես, արգար է և համարիտ է. քայց զու զիմ երախտիքն մը մոռանար. որ դիշեր ու ցերեկ կու աշխատիմ և կու դատիմ, որ կոյ ուտեն քանանացն և ժողովուրդքն. և ապա դան առ քեզ աղաւթել և երկիր պագանել աստուածոյ:

Յուշանէ առակս, թէ կան աշխարհի մարդիք, որ հանապաղ աշխատին և դատին, որպէս մեղու. և թաղաւորք և իշխանք և մաննայն մարդիք զվաստակս նոցա ուտեն և ապա երթան յեկեղեցին և դաստուած ուրհնեն և յիշեն:

Առ. Վարդ. Բ. 151. ՃԻԶ.

Այսպէս ուրեմն նախ մարմինը, ապա հոգին, նախ ուտել և ապա նոր յեկեղեցի դնալ աղոթելու: Կարգանք և մեկ ուրիշը Վարդանա առականքից.

ԱՂՈՒԷՍ ՅԵՎ ԿԱՔԱՎ

Աղուէն էառ կաքաւ մի ի բերանն և կամէր ուտել զնայ. և ասէ կաքաւն. Աւրնեայ է աստուած, որ կոչեաց զիս յիւր արքայութիւն. զի գերժանիմ ի յայս չարեացս. և ապա զու, ազվես, դոհացիր դաստուծոյ և ապա ուտես զիս. քեզ մեծ վարձք է: Նւ աղուէն կըկ-դեցաւ և հայեցեայ յերկինս և բացեալ զբերանն՝ ասէ. Դոհանամ զքէն, աստուած բարի, որ պատարասեցիր ինձ սեղան բարութեան: Նւ կաքաւն զերժաւ ի բերանոյն և թռաւ Նւ ասէ ազվես. Ոյ անմարտ և յիմարս, յառաջն պարտ էր ինձ ուտել և ապա զոհանալ դաստուծոյ:

Յուշանէ առակս, թէ զխոստացեալ իրքն մը համարիք քեզ և մը շնորհակալ մարդոյ լինիտ, մշնչե աւանուս. և թէ ջուր տան քեզ, ի նոյն ժամն ի զոգդ առ զինքն, զէ չատք ասեն և ոչ տան դասացեալն լւրեանց, ոյ եղբար, և սուտ լինին:

Առ. Վարդ. Բ. 55. ԽԲ.

Ահա թե ինչին և հանդուս մեր միջնադարյան վերածնութեան միտքը մեր առականքի մեջ. նախ ուտել և ապա զոհանալ աստուծոյ:

Յեկ չկարծեք, թե այս դադափարը միայն մեր հին առականքինն է. դա բուն ժողովրդական հասկացողութեանն է, վոր տարբեր ձևով արտահայտված գտնուս ենք նաև մեր արդի ժողովրդական առականքի մեջ:

«Աղուիս զկաքաւ բռնից: Կաքաւ ըսաց. «Աղուէն, ի՞նչ տ'ենիտ: Ըսաց. «Թի ա՛ւտումս: Ըսաց. «Փառք տու աստուհ, նուր զի կ'ըս:—Ինչ փառք խու աստուհ, կաքաւ բերնէն թռաւ: Աղուիս դարձաւ, ըսաց. «Նուտ տուն աւեր ըլի, ինչ չուր կուշտ չուտը, փառք տա աստուհ (Գ. Վ. Հովսեփյան, Փղրանքներ, Թիֆլիս, 1892, յեր. 30):

8

Սոցիալական հարաբերութեաններ են իրենց հիմքում նաև միջադպարին հարաբերութեանները, վոր մի ազգի իշխող դասակարգն ունի մյուսի նկատմամբ: Ուստի առականքի այս տեսութեանը լրիվ անելու համար, տեսնենք այժմ, թե ինչպէս Մխիթար Դոշն առանձին ուղադրութեանն է դարձնում հայերի հարաբերութեանն «այլազգիներէ», այսինքն՝ մահմեդականների հետ — ինչպէս նա իր Դատաստանադրքի մեջ եւ անվանում և մահմեդականներին — և ինչպիսի կարծիք ունի նրանց մասին:

Թվում է, թե բուն Հայաստանում թե քրիստոնյա և թե մահմեդական տերութեանների մեջ 12-րդ դարում իրար կողքի ապրող յերկու ժողովուրդների, հայերի ու սելջուկյան թուրքերի միջև հետզհետեւ մեղմանում է այն թշնամութեանը, վոր նկարագրում է Արխատակես Լաստիվկեսցին: Կարծես, նրանք իրար հետ միևնույն տեղում ապրելով, կենդանի փոխադարձ ազդե-

ցությամբ, խառն ամուսնությանն երբ և ավելի ևս կրոնական անտարբերության հետևանքով, մի հայրենիքի, մի հող ու ջրի մեկ ընդհանուր ժողովուրդ պիտի կազմեյին, իրար հետ միացած ընդհանուր շահերով: Բայց այդ գլուխն չի դալին 13-րդ և հետագա դարերի վերվայրումների հետևանքով և այլ պատճառներով:

Դ՛նչ և մտածում այս մասին Մխիթար Գոշը և առհասարակ յեկեղեցական դասը:

Յերբ իր բանակի մեջ շարժական յեկեղեցի ունենալու համար Զաքարի գորավարն Անիում ժողով և գումարում, այնտեղ բերում են նաև «մեծ վարդապետ» Մխիթարին: Ահա թե ինչ և ասում Մխիթարը ժողովական յեպիսկոպոսներին ու վարդապետներին. «Դուք հողայք վասն ազգիս, զի մի աշխարհի սովորութեամբ խառնեսցին ընդ Վիրս, և ես հողամ վասն գօրավարիդ, զի մի լիցի սա վրացի իրեւ զեղրայր իւր, որում սպասին Վիրք»^{*)}: Յեկեղեցականությանն, իր շահերի տեսակետով, վոչ մի բանի, նույն իսկ յերկրորդական կրոնական սովորությանն երբ և անտամամբ զիջող չէր: Յեթե քրիստոնյաների վերաբերմամբ այսպես եր, բնականաբար Մխիթարի համակրությունը չէր կարող լինել հայերի ու մահմեդական թուրքերի այնպիսի բարեկամական հարաբերության կողմը, վորի մասին ասվեց վերևում: Այն ժամանակ, յերբ Զաքարիան, «մեծ սպարապետ և շահնաճարեւելան կողմանցն», սրի ուժով նվաճում եր Հայաստանի «այլազգիներին» մինչև Բաղրևանդ և հասնում մինչև Արտաշիլը Մխիթարը, վոր նրա խոստովանահայրն եր, չէր կարող անտարբեր մնալ զեպի «այլազգիները»: Նա առաջինի մեջ հրահրում և հայերի կրոնական զգացումներն և ատելությանն զիսկ մահմեդականները, ցույց տալով, թե նրանք չեն կարող միմյանց բարեկամ լինել:

Ազգերն իրենց ցեղական ու լեզվական տարբերությամբ ընդհանրապես իրար դեմ անհավան կերպով կանգնած են յեղեղ, կամ, ինչպես Ֆրիլը գրում և,

Ուրիշ լեզու ամեն մեկի,

Որ մեկ մեկի ոչ հաւանի:

Այս անհավանությունն ահա կրոնականի մեջ ավելի մեծ ուժով և յերևան յեկել: Ուստի և ազգերի խտրությունը պահելու միջոցներից մեկը հոգեւորականների համար յեղել և ուրիշների կրոնի, կրոնական ծեսերի յեղծումը ծաղրով:

Առաջադիր Մխիթարի աչքին ամենից առաջ դարձում և «այլազգիների» լիպցումը, վոր նա ծագրում եւ Ըստ Առաքաղբին՝ նրանք շատ չարիքներ են գործում՝ իրենց առաջնորդներին՝ մոլաներին հետեւելով կապկարաբ, և յերբ մեղադրվում են, մեղքը ձգում են իրենց մոլար առաջնորդի վրա և ասում են, «այլազգի եմ, լուսնամ և սրբիմ»:

^{*)} Կրեոսոս Վարդապետ Գանձակեցի, Գատություն հայոց, Թիֆլիս, 1909. յեր. 167.

Ետեւ կապիկ զմալում զի լուանայր, և լուսացաւ Ետեւ զի ի բարձրաւանդակէ Էլեալ աղաղակեաց, արար և զայն կապիկի իջեալ Ետեւ զի զէշ ուտէր շուէն, և սկսաւ կապիկի և և ի մեղադր լինելն ասաց՝ Այլաղչի եմ, լուանամ և սրբմա Զի զտեսեալն զործել:

Պարզ է առակս, զի զբաղում չարն տեսանելով զործեն, և լուացեալ՝ ասեն սրբի, զդատաւան ի մարտ առաջնորդն կուտանով:

Մխ. ՂԹ. 85.

Ներսես Շնորհալիւն արդեն ծաղրում և մահմեդականներն այս ծեսը:

Այն որ զործէ դադանդութիւն

Զանասելի մարդոյ լեզուին.

Է՛ Ուսուցանէ իւր ժողովին

Դործել ըզնոյն ըզպոփալքն.

Եւ քաւութիւն մեղաց նոցն

Օրնադրէ լուանալին.

Ոգոգանել ջրով դետին.

Մաքրել միայն դերեկին.

Որով և զորաք՝ որք ի ջրբին,

Առուելուն քան ըզնոսին:

(Ողբ Եղեսիոյ):

Մխիթարի առակներն մեջ ուրիշ տեղ ծաղրվում և մահմեդականներն մատաղը, վորն վրա կւմում են:

Պատարագ զենման մատուցանել աղաւ կամեցաւ, և զբաղումս հրաւիրեաց, և եկին յօմարեալը: Եւ զենումն նորա էր մուկն հնացեալ և սկսաւ ինքն հարկանել, և ապա այլքն և եղև պատերազմ. և զբաղմաց դաշն փորեցին, և մերկ զմիմեանս արարին: Եւ սկսան նոսրիլ զպատարագ նորա, և զմատուցոյն եւս. և ասաց նոցա թէ՝ Յաշակերտացն ուսայ ը... զպիղծն մատուցանել, և դարձեալ պատերազմել:

Դիտելի և ամեննցուն առակս, զի զգէմս պատարագին ունին պոփոյն...

Մխ. ՃԻԹ. 109.

Կարգանք և այս առակը.

Մեռաւ որդի աղաւաւ, և սղաց յոյժ. եկին և բաղումք յողբ նորա, և նա ճաշ մեծ յօրինեաց սղաւորացն տակով: Զայս ի ըրնստոնէքցն ուսայ, և ոչ ի յայլաղեաց, զի մլտ-տեալք ի լաց և ոչ ի հաց կոչին: Եւ զայս աղաւ արար, զի զբան պատարագին բժշկիցէ: Ամենայնիւ առակս զսովորութիւն կարգաց նոցա թիւքս ցուցանէ՝ զսղոյ և զպատարագի և զայլոց եւս:

Մխ. ՃԼԱ. 110.

Այսպես ուրեմն «այլաղղիներն» բոլոր կրոնական սովորութիւններն ու կարգերը թյուր են ըստ Առաքեալին: Յեթն նրանք մի լավ բան ունին, ինչպես մեռելահացը, այդ եւ քրիստոնյաներից են սովորել, ասում ե Առաքեալները:

Մխիթարն իբրեւ հոգևորական զեմ ե յեկում խառն ամուսնութեան և երկնի, նա մեծ հոգացողութիւն ունի, վոր այդպիսի ամուսնութիւններ չլինեն հայերի և մահմեդականներն մեջ:

Բաւ հրեշտակ տաքեաց առ արծիւ, և խնդրեաց զգուստր նորա հարսն տակով: Դու տուրնջեան քաջամարտիկ ես, և ես զիշերոյ պատգամիմք ի խնամութիւն: Եւ յետ բաղում թախանձանաց յաճնն առ տար և ի լինել հարսանեացն, ի տուէ լոյս ոչ կարէր տեսանել:

փեսային, և ծաղր առնէին բազմեալքն: Եւ իբրեւ եղև գիշեր՝ և ոչ հաբոն ետես լոյս, յաճախաց և անդ այգանուծն: Եւ վասն այսորիկ փութով լուծաւ հարսանիքն:

Զմիտս իւր առակս նմանեցուցանէ այնոցիկ հաւատացեալ թաղաւորաց և իշխանաց, որ զգտտերս իւրեանց ըստ իրիջ պատճառի յամուսնութիւն տան այլասեռից՝ խաւարելոց ի լուսոյ հովատոց, ուստի և ոչ է միտրանութիւն, այլ հարկաւոր՝ բաժնաւ:

Մի. ճի՛Գ. 104.

Քրիստոնյա թագավորներն և իշխանները, ասում և Առակագիրը, իրենց աղջիկներին վորևե պատճառով ամուսնության են տալիս «այլազգիներին», բայց գրանով սեր ու միաբանություն չի լինում: Նա այս առակը գրելիս անշուշտ նկատի ունի նաև այն, վոր Զաքարիէ յեղբայր իվանի Աթարեկն իր աղկան տվի եր Հալբերի սուլթանին կնության: Այս միեւնոյն առակի խրատականը Վարդանա առակների մեջ (Գ. 107. ՄԱ) այսպես է. «Յուցանէ հհաւատացեալ մարդիկ, որ զգտտերս տան այլասեռից խաւարելոց ի լուսոյն Քրիստոսի»: Ուրեմն վոչ միայն թագավորների և իշխանների դուստրները, այլ ընդհանրապես:

Մի ուրիշ առակ:

Թորէկ թախանէր զոգնի թէ՛ Զորդիգ քո սան աւից, և բարեկամը լիցուր: Եւ իբրու յանձն էաւ զկնի բազում հարկի, ասաց, եթէ՛ Վասն գի դժուարահամբոյր ե, մերկացո զնա, գի գիւրբին իցէ ի գգուել: Եւ պատրեալ արար: Եւ իբրեւ ետ զնա, սկսաւ ուտել, և ձեռնհաս ոչինչ էր առնել: և զնաց բազում կոծով:

Զխորամանկութիւն այլասեռից առակս նշանակէ, որ զքրիստոնեայս պարզամիտս պատրեն՝ իշխանաց տալ զորդիս նոցա, զի պատուեալ մեծացուցանիցեն. և ոչ կամն թէ խրատիչ ոք ընդ նոսա իցէ, գի թափուր արարեալ զոգնի նոցա, սղանանիցեն. որ և յայտ եղև ի թաղութեան, ոչ ինչ կարող են առնել, բայց միայն ողբան, նմանապէս և ի դուստրն է տեսնել:

Մի. ճԺԱ. 95.

Այստեղ եւ Միլիթարը պատմում է, թե «այլազգի» իշխանները խորամանկությամբ խաբում են պարզամիտ քրիստոնյաներին, վոր իրենց վորդիներին տան իրենց, խոստանալով, թե մեծ պատվի կը հասցնեն նրանց: Միաժամանակ, սակայն, նրանք չեն ուզում, վոր այդպիսի քրիստոնյա տղաների կամ աղջիկների հետ խրատող մի մարդ գնա: Ծնողները չեն հասկանում վորոգայթը և հետո միայն իմանալով այդ՝ լուի վորդում են:

«Իշխող դասակարգի մտքերը յուրաքանչյուր դարաշրջանում իշխող մտքեր են, այսինքն՝ այն դասակարգը, վորի ձեռին է հասարակության իշխող նյութական ուժը, նա միաժամանակ հանդիսանում և նրա իշխող հոգևոր ուժը: Վոր դասակարգը վոր կարող և տնօրեն լինել նյութական արտադրության միջոցներին, նա միաժամանակ դրա շնորհիվ տնօրենում և հոգևոր արտադրության միջոցները: Այնպես վոր դրա շնորհիվ նա միաժամանակ իշխում է առհասարակ նրանց մտքերի վրա, վորոնք միջոցներ չունեն հոգևոր արտադրության համար: Այս պատճառով ահա հոգևորականների հայացքներն ու դադափարախոսությունն առհասարակ, վոր յերևում են առակների մեջ, նրանցից անցել են մեր շինականությանը: «Այլազգիների» կրոնի ծաղրն ու խառն ամուսնության վերահիշյալ գիծը գտնում ենք և մեր

փեսայն, և ծաղր ատնէին բազմեալքն: Եւ իբրեւ եղև գիշեր՝ և ոչ հարսն ետես լոյս, յաճախեաց և անդ այդանուամբ: Եւ վասն այսորիկ փութով լուծաւ հարսանւոյն:

Զմիտս իւր առաիւ նմանեցուցանէ այնոցիկ հաւատացեալ Թագաւորաց և իշխանաց, որ զգտտերս իւրեանց ըստ իրենց պատճառի յամուսնութիւն տան այլասեռից՝ խաւարելոց ի լուսոյ հավատոց: Ուստի և ոչ է միարանութիւն, այլ հարկաւոր՝ բաժնաւ:

Մկ. ՃԻԳ. 104.

Քրիստոնյա թագավորներն և իշխանները, ասում և Առաւելաբար, իրենց աղիւկներին վորեն պատճառով ամուսնութեան են տալիս ճայլազգիներին, բայց դրանով սեր ու միարանութեան չի լինում: Նա այս առակը գրելիս անշուշտ նկատի ունի նաև այն, վոր Զաքարիայ յեղրայր իվանի Աթաբեկն իր աղիկան տվել էր Հալեբի սուլթանին կնութեան: Այս միևնույն առակի խրատականը Վարդանա առակների մեջ (Գ. 107. ԾԱ) այսպես և. «Յուզանէ զհաւատացեալ մարդիկ, որ զգտտերս տան այլասեռից խաւարելոցն ի լուսոյն Քրիստոսի»: Ուրեմն վոչ միայն թագավորների և իշխանների դուստրները, այլ ընդհանրապես:

Մի ուրիշ առակ:

Թորեկ Թախանձէր զողնի Թէ՛ Զորդիդ քո սան առից, և բարեկամք լիցուց: Եւ իբրու յանձն էառ զկնի բազում հարկի, ասաց, եթէ՛ Վասն զի զժուարհամբոյր ե, մերկացո գնա, զի դերերն իցէ ի գգուել: Եւ պատրեալ արար: Եւ իբրեւ ետ գնա, սկսաւ ուռել, և ձեռնհաս ոչինչ էր առնել. և գնաց բազում կոծով:

Զխորամանկութեան այլասեռից առաիւ նշանակէ, որ զբխատնայս պարզամիտ պարեհն՝ իշխանաց տալ զորդիս նոցա, զի պատուեալ մեծացուցանիցեն. և ոչ կամեն Թէ խրատիլ որ ընդ նոսա իցէ, զի Թափուր արարեալ զողնիս նոցա, սպանանիցեն. որ և յայտ եղեալ խաբէութեան, ոչ ինչ կարող են առնել, բայց միայն ողբան. նմանապէս և ի գտտերսն է տեսնել:

Մկ. ՃԺԱ. 95.

Այստեղ եւ Միխիթարը պատմում և, թե «այլազգի» իշխանները խորամանկութեամբ խաբում են պարզամիտ քրիստոնյաներին, վոր իրենց վորդիներին տան իրենց, խոստանալով, թե մեծ պատվի կը հասցնեն նրանց: Միաժամանակ, սակայն, նրանք չեն ուզում, վոր այդպիսի քրիստոնյա տղաների կամ աղիւկների հետ խրատող մի մարդ գնա: Մտողները չեն հասկանում վորոգայթը և հետո միայն խմանալով այդ՝ լուկ վողբում են:

«Իշխող դասակարգի մտքերը յուրաքանչյուր դարաշրջանում իշխող մտքեր են, այսինքն՝ այն դասակարգը, վորի ձեռքն և հասարակութեան իշխող նյութական ուժը, նա միաժամանակ հանդիսանում և նրա իշխող հոգևոր ուժը: Վոր դասակարգը վոր կարող և տնօրեն լինել նյութական արտադրութեան միջոցներին, նա միաժամանակ դրա շնորհիվ տնօրենում և հոգևոր արտադրութեան միջոցները: Այնպես վոր դրա շնորհիվ նա միաժամանակ իշխում և առհասարակ նրանց մտքերի վրա, վորոնք միջոցներ չունեն հոգևոր արտադրութեան համար: Այս պատճառով անհ հոգևորականների հայացքներն ու դադափարախոսութեանն առհասարակ, վոր յերևում են առակների մեջ, նրանցից անցել են մեր շինականութեանը: «Այլազգիներն» կրոնի ծաղրն ու խաւան ամուսնութեան վերահիշյալ գիծը գտնում ենք և մեր

ժողովրդական մկալի՝ «Մասնա ծաերի» մեջ, վոր իր վերջնական կառուցվածքն է ստացել մինչև XIII դարի կեսերը: Դավթի կին Սանդուլը, մի քանի պատմաներով, «այլազգի» յն: Հայազգի Մովսէլ խանումը դնում է «այլազգու», բայց նրա հետ ծածուկ դնում է մի վարդապետ:

Կարդանք հետեւյալը.

Հայեկ առ սադ աղբւսէր, եթէ՝ Գրեքադէմ դուով ես՝ ի բնաւից պարտաւիմ. և դու այդքան սպիտակ և պայծառ լինելով. աղաչեմ զի ուսուցես ինձ նման քեզ սպիտականալ: Եւ նա կամակերպ եղեալ՝ ասաց, թէ՝ Միշտ նման ինձ լուսացիս ջրով: Եւ ի լուանալն ելանէր սեւ. նորա փետուր, և դարձեալ նոյն դայր օրինակաւ Եւ զայս դարձեալ աղաչէր ուսանել: որում ասաց. Թէ՛ ընդ լուսացմանդ դմա ուսցիս լեզու, ապա կարճես նման ինձ լինել: Եւ նա յանձն ոչ առնոյր զազգի մոռանալ զձայն. և մնաց նորօրինակ գիշերադէմ:

Մեկնի այսպէս ասաւիտ. զի գիշերադէտ են ողւով ազգ Գարսից. և եկեալ առ քահանայս՝ զպայծառութիւն կամին ուսանել ողւով, զոր ասաց զխորհուրդ մկրտութեանն ամբողջ պաշտելու Եւ նա լուսացեալ ի մեղաց փոխեալ լինէր, և դարձեալ զճճաբարտն խոստովանութիւն յանձն ոչ առնոյր, նոյն օրինակաւ մնայր սեւա ողւով. զոր չէ արժան և ոչ ջրով մկրտել: Եթէ՛ զհաւատս ոչ ընկալցին:

Մի. ճլն. 113.

Ուրեմն կան պարսիկներ, վորոնք յենթարկվում են հայերին և սրտնցից չպարտաւիճելու համար՝ խնդրում են քահանաներին, վոր մկրտեն իրենց, և մկրտվում են: Նույն իսկ սրա դեմ է Մխիթարը. Դրանով նրանք իսկական քրիստոնյա չեն դառնում, ասում է նա. քանի վոր այդ մկրտվողները հանձ չեն առնում իրենց հայրենի բնութիւնն ու բարքիս, «զազգի մոռանալ զձայն», այսինքն՝ հայ դառնալ լեզվով ու բարքով, այլ մնում են իրենց ազգին, իրենց հին վոգով և վարք ու բարքով: Այս պատճառով և Առաքախոսը խրատում է, թե այդպիսիներին չէ՛ արժան և ոչ ջրով մկրտել, եթէ՛ զհաւատս ոչ ընկալցին: Այս սովորութիւնն և այսպիսի մկրտութիւնը, յերեկ, յերկար հարատեւում է մինչև 19-րդ դարու զվարճալիքը, թե քրդի կամ թուրքի յերեխաները չեյին մնում. ծնվում է մի յերեխա ևս, վորին հայրը բերում է քահանայի մոտ և նրան շատ բուրդ ու բամբակ տալով՝ խնդրում է մկրտել: Քահանան էլ մկրտում է ասելով.

Գեարդայ Սովաւան,

Թուրքի տղան լողանա.

Ինձ ինչ կը հայանա, թե կը թուրքանա,

Թաք իմ բուրդ ու բամբակը բուանա:

Մխիթարի առակների մեջ տեսնում ենք, վոր «այլազգիները» գրեթէ ընկճված են, և նրանց ու հայերի հարաբերութիւնը բարեկամ կամ անկամ է: Բայց ըստ Առաքալիւնի այլազգիները սրտով բարեկամ չեն, այլ միայն ուժի առաջ խնդարված են. ուստի պատրաստ են միշտ յերդմնադանց լինելու: Քրիստոնյա թաղավորը ձեւի տակ ունի «այլազգի» իշխաններ, վորոնք խոստանում են անհապաղ տալ թաղավորի հարկը, մի պայմանով միայն, ասում են, վոր «մի յարաժամ զմեզ զարհուրեցուցես»: Թաղավորը դաշինք է դնում և պահելով իր ուժերը՝ յերկար ժամանակ խաղաղութիւնամբ ապրում է նրանց հետ: Բայց նրանք այդ խաղաղասիրութիւնը թուլութիւն են

կարծում, սկսում են ապստամբել, այլ և ծաղրել նրան: Այդ ժամանակ քրիստոնյա թագավորն ել չհամբերելով՝ հարձակվում և նրանց վրա և շատերին կոտորում անխնայ:

Ջարժիւ աղաչել սկսան թուղունք միանգամայն որ ընդ ձեռամբ նորա, և ասեն. Անյապաղ դհարի քո տացուք, մի յարածամ դմեզ զարուբեցուցես: Եւ նա դառնա եղ, և կայր ընդ նոսա խաղաղութեամբ բազում ժամանակս: Եւ սկսան ապստամբել, այլ և այսպէս, և ժողովեալ խորհէն և յիշխանութենէ եւս ընկնում: Գարծէր և ճընճղուկ, եթէ՝ Յաւս նորա ծրտեալ կուրացուցանեմ: Եւ իւրաքանչիւր զօրութեամբ իւրով պարծէր. և սկսան մարտ եւս դնել: Եւ նորա ոչ տարեալ յարձակեցաւ ի վերայ, և զբազումս ի նոցանէ սատակեաց:

Տպաւորէ այս առակ զգէմս հաւատացեալ թագաւորի և զանհաւատից, որ բարեպաշտութեամբ խաղաղութիւն առնեն, և նոքա ապախտացեալ ապստամբեն, զպատճառս խաղաղութեան ոչ գիտելով. և այսպէս, և պատեալով եւս շարժեն, և ակամայ լինին մահ արկանել նոցա անխնայ:

Մխ. ՃԻԴ. 105.

Ներսէս Շնորհալիւն արդեն «այլազգիներէ» համար սովորական և համարում ուխտադրութ լինելը.

Ջուխտն ասէր զոր եղ ընդ նոսին,

Որդէս բնութիւն էր այս նոցին:

(Ոգր եղեսիոյ):

Նրանք սիրում են արյունահեղություն, ասում և Շնորհալիւն:

Սուրն անողորմ անօրին

Որ մեր արեանս է ծարաւի,

Որ չէ յաղեալ և ոչ յագի

Մինչև ի գալ կատարածի...

Թվում և թե, ըստ Մխիթարի, սուտ յերդումը սովորական և յեղել իր դարադրմանում ընդհանրապես:

Մկուռն համանգամայն հրեշտակս առաքեն առ կատուն և ասեն. Ձինչ քեզ մեղանչեմք՝ որ այգբան դմեզ հալածես. զինչ քո ուտեմք: Եւ նա ասէ. Ո՛չ գիտէք, եթէ յայն սակս զմեզ զարմանեն մարդիկ, զի զամբաստնոցս մեր պանեցուք. արդ եթէ դուք այնմ ոչ մեղեցէք, համարձակ շրջեսցէք, և ոչ ինչ ձեզ փասեցիր: Եւ ձեռն ի գլուխ եղեալ երգմամբ հաստատեաց զայս: Եւ մկանցն համարձակեալ՝ կամեցան զանկեալ հատոն առնուլ. և յարձակեալ ի վերայ կալաւ զբազումս ի նոցանէ: Եւ ասեն. Ո՛չ ապաքեն երդուար՝ անկեալ հատի ոչ առնուլ վրէժս: Եւ նա ասէ. Ոչ երդուայ, այլ ըստ սովորութեան զգլխով զձեռս արկի: Նման իսկ է առակս կեղծաւոր երգուեցողաց, զի և ոչ պայմանի մեան և ոչ ուխտի, այլ ստեն՝ զիպող մնայն ժամ դտեալ:

Մխ. ՂԱ. 81.

Բազմական և միայն կարգաւ Վարդանա առականերից մեկն ևս, «Տաճկաց օրէնք», այսինքն՝ մահմեդական օրենք, վորպէսզի տեսնենք, թե ինչպէս նրանք, ըստ Առականութիւն, պատրաստ են յերդումը խախտել վորեւ ձևակաշումը յամբ:

ՏԱՃԿԱՑ ԱՌԻՆԵՐ

Տաճկի ֆախիր մի զէշն փախուցեր էր և այլ ոչ կարէր բռնել: Եւ երգումս տբար ի վերայ կնոջ իւր, Թէ՛ Դ. տալիս կնիկն պոչ լինի ի յերմէ, Թէ զէշն բռնէ, հեծնու և այլ եջանէ յիշուն: Եւ յորժամ բռնեց զէշն և հեծաւ և եկաց ի վերայ իշուն, շատ մի և յեծե-

դեցաւ և քշէր դէշն և ինքն ի վերայ ևւ երթայ առ կարգացողնն, թէ ֆաթվայ տան. որ յերբ իջանես յիշուն և կւնն ոչ թողւի ևւ ամենեքեան ասացին, թէ՛ Այդ բանդ ոչ կայ ֆաթվայ ևւ յետոյ ևկեալ մյն կարգացող և ասաց, թէ՛ Մի տարեկուս լինիր. այսոր բան ևեջաւ է. դնա քշէ դէշն ի ծառն տակն և ել յիշոյն ի ծառն և իջ, ի ծառնն ի վար:

Յուշանէ առակս, թէ այլազգիքն առասպելք են և բնութեամբ զաւրկնացն դործեն. քանզի աւրէնս ոչ ունին. զի առաւելքն են և յամենայն աւրէնս իւրեանց զառասպելս խառնեալ ունենա:

Առ. Վարդ. Բ. 174. Ճե՛նէ

Մի անգամ, վոր Վայլազգիներն մասին այս կարծիքը կա կազմված, Առաւելախոս Մխիթարը խրատում ե՛ւ ամենևին չհավատալ Վայլազգիներին, զգուշանալ նրանցից:

Որոքէր ոմն զիւրնջիւն՝ ասելով. Արե՛ եկ արտաքս, զի մեծաբնալ պատուեցից զքեզ բազմազան օրինակօր ևւ նա ասէ. Ձրե ո՞ զքեզ տեսեալ պատուաւէր առ այլս, զիմեզ և ինձ լինոցիս. ոչ է այդ. այլ զի արեան իմոյ ցանկատ ևւ ոչ եկ արտաքս, զերծեալ ի նմանէ զգուշութեամբ:

Ձորթուցանէ զմեզ առակս, ամենեւին ոչ հաւատալ պատիւ բանից այլազգեաց, յայտնի ունելով զմիտս յանցելոց խաբւթեքեանց առ այլս. զի արեան և ստացուածոց ցանկան քրիստոնէից, և ոչ եթէ պատուեն:

Մխ. ՀԲ. 67.

Այս ժամանակներից են անշուշտ դալիս մեր այն ժողովրդական առածները, վորոնցով վորոշվում են մեր և Վայլազգիներին՝ հարաբերությունները և զգուշություն և քարոզվում նրանց նկատմամբ: 1)

Մխիթարը մի ուրիշ տեսակ վերաբերմունք եկ և խրատում ընդհանրապես թշնամիներէ հանդեպ.

Եկեալ աղբ ձկանց առաջի Թաղաւորին իւրեանց՝ և ասեն. Ձի ասացիր թէ Թշնամիք առ մեզ ոչ դան, և վասն այն ոչ տամք պատերազմ. ահաւասնիկ եկեալ մարդիկ որսան զմեզ, և դու զրէժ ոչ առնուս. և սղոցաձկանն հարեալ զնաւ որսորդաց՝ և զբաղումս ընկզմացս ևւ դայս ևւս եղեալս պատմէին նմա ևւ լուեալ զվարացաւ նոցա. և ուսմին ձկան հրամայեաց պահ ունել նաւորդաց, զի մի այնպիսի ինչ պատահիցէ. և զնոսա հաճէր Ո՛չ դիտէք, տաէ, զի իշխան մեր են մարդիկ կարգեալք յաստուծոյ, և վասն այն հարկ է մեզ լռել՝ զոր ինչ և զործեն:

Հանճարեղս կամի առնել օրինակս զԹաղաւորս. զի յորժամ հզօր ոք քան զնորայն իցէ Թաղաւորութիւն, և կամիցի հարկս պահանջել, յանձն առցէ տալ ս՛րբով, և զքնզգ. մացեալսն խրատեցէ՛ ոչ հակառակել. զի յաստուծոյ կարգավորեալ է՝ տկարի հնազանդ լինել հզօրի:

Մխ. ԴԷ. 63.

Ուրեմն հզորների առաջ հարկավոր ե լռել և հարկատու լինել: Մի ուրիշ առակի մեջ խրատում ե, թե յերբ Թշնամիներին դիմադրել չեն կարող, ալիւլի լալ և նույն խիւ այդ մասին ժողով չանել և չխորհել:

Աղբ ճընճկաց հրապարակ եղին խորհել զորոգաց. իսկ ծերունի ոմն ասէ. Մի մոռովիք, գուշէ լուեալ զձայն Թեւոց Թշնամեաց և Թռուցեալ՝ զվատաստութիւն ձեր յայտ անիցէք. այլ յեկեղեցիս զչմեալ աղօթեցէք առ աստուած: ևւ ոչ լուան. և յանկարծակի ձայն առին Թեւոց որսոգաց, և լուծաւ երախան:

Ձմեզ խրատէ առակս. զի յորժամ չիցեմք բովական ընդդէմ կալ Թշնամեաց, բարի է ոչ ժողովուրդ վասն նոցա տալ կարծիս, և դւրաւ լուծանել յահէ նոցա, և զվատաստութիւն մեր յայտ առնել. այլ խրատու իմաստնոց յեկեղեցիս յաղօթս ապաւինել:

Մխ. ՃԼ. 110.

Առնենք մի ուրիշ առակ.

Հարցաւ ընդ թղենի, Թէ՛ Զիարդ է զի բազում ոստա առ երկրաւ տարածանաւ Եւ նա առէ. Քանզի բազում են թշնամիք իմ, և ես խոնարհիմ, զի մի ոստադոտոր եղեց. և նախ քան զիլանելն յիս՝ յաղեցուցանեմ, և մոռանան զչարութիւնս:

Խրատէ զմեզ առակս, խոնարհութեամբ և սեղանօք և քաղցրութեամբ ընդ առաջ ելանել թշնամեաց, յորժամ ստնանել ոչ կարեմք. զի շիջանիցին ի դառնութենէ բարուց, և մոռացին զչարիս:

Մխ. ԺԲ. 13.

Այս առակի մեջ տրված խրատը, խոնարհությունն թշնամիներէ առաջ, արդարացւում ե նրանով, թէ թշնամիները շատ են, և յեթե այդպես չվարվի մարդ, «վոստադոտոր կը լինի». ուստի թշնամիների հարձակվելուց առաջ՝ նրանց աչքը պետք ե կշտացնել: Թույլի վարմունքի ուրիշ է ենցադակա՞ն խրատներ ել տալիս նա. «Անմխաս է (հոգու տեսակետով) դիպող ստույթեամբ ազատիլ ի վտանգէ թշնամեաց, և է անկպեր» (Մխ. ԶԳ. 74), ինչպես և յերբ մարդ ընկնում ե սպանողի ձեռն, կարելի չե խարեյուլթյամբ ազատվել բռնի մահից:

Յեմ վերջապես՝ յեթե մեկն իր թշնամու ձեռից փախչում և և մահից ազատվում, նա յերկշտ չե, այլ արի:

Անկա ի պատուէ կերողի հատ սրեռան. և այգանեցաւ ի բախայէ որպէս զերկշտ. որում ասաց. Ոչ եմ երկշտ, այլ արի:

Յուզանէ առակս, յարժամ յապահանջաց կենաց մերոց զանդեռել, սակայն արեւութեամբ ի նոցանէ փախչել:

Մխ. ՀԲ. 43.

Ահա ուժեղ թշնամու և առհասարակ ուժեղի հետ թույլի վարմունքի յեղանակներ, վոր մեր ժողովրդի մեջ յեկել հանդել են այն առածին, թէ՛ «Այն ձեռը, վոր կտրել չես կարում, պիտի պահես դնես ճակատիդ»: Այս առածը, սակայն, այլազգիների նկատմամբ, ավելի ուշ ժամանակի յե, յերբ հայերը խոստ ճնշված են յեղել զորեղ հարևաններից և ստիպված են յեղել այդպես խոնարհվելու, վորի պատկերը շատ ուժեղ հանված ե վարդանա առակներից մեկի մեջ («Քա հա՛նայ և Ղադի»): «Էրէց մի և խատի մի և խատուն սե ծառայ մի երթային ի ճանապարհ. և էրէցն ամենակին ոչ խօսէր: Եւ ասաց խատին. «Քադի, ասա ինձ բան ի գրոց»: Ասաց էրէցն. «Սէտի, նայ դու Գ հագուց ես հագեր պողպատի և ես մերկ եմ: Ա. զի խատի ես և շարաթ. Բ. զի մսըլման ես. Գ. քու իրան իրաւ է և սուտն ալ իրաւ ես: Նա ասաց. «Մի ահ կրեր. հանց բան ասէ որ հաւանիմ»... (Աւ. Վարդ. Բ. 167. ԺՆԱ): Ահա թե ինչու ստիպված ե քահանան խոնարհվել զադու առաջ և, ինչպես շարունակության մեջ պատմվում ե, քրիստոնեութուն և մահմեդականութուն մի հալասար կարգում դնել:

Այս ծայրահեղ խոնարհությունն, ինչպես ասացի, ավելի ուշ ժամանակի յե, յերբ զագին յերեք պողպատի հագուստ եր հագած, իսկ քահանան մերկ եր: Ի՞նչ թաքի ժամանակ, սակայն, յեթե հայերը մի տեղ թույլ եյին «այլազգիներից», ուրիշ տեղերում մեծ մասամբ ավելի ուժեղ եյին զգում իրենց: Ուստի ինչքան ե Մխիթարը խաղաղասիրություն և անհրաժեշտության

առաջ խոնարհել և խրատուեմ, բայց և այնպես նա չի քարոզում չկ'ալիւ. այլ ընդհակառակն, թաղավորի համար նա ասում ե. «Թէ հարկաւորի ի թշնամեաց, անարդութիւն է ոչ տալ պատերազմ» (Մխ. ԿԶ. 63): Ուրիշ տեղ նա ասում ե, թե խոնարհութիւնն իր չափը պիտի ունենայ. խոնարհութիւնով չպիտի ընկնել գետին և լինել «կերակուր անմտաց» ոչ դիտելով զպատիւ անձինս. «զի խոնականութեամբ խոնարհիւն՝ արեապէս խոնարհութիւն է, իսկ անիմաստաբանս՝ եղծուի» ոչ գիտելով զօրինակ խոնարհութեան զմամանակի և զտեղւոյ՝ ըստ զանազանութեան» (Մխ. ԼԸ. 43): Անիմաստաբար, այսինքն՝ անխելք անմիտ կերպով խոնարհելը, ուրեմն, «եղծում», այսինքն՝ ավերում, քայքայում ե պատճառում: Բացի այդ՝ անձնապատվութիւնը չպիտի մոռանալ և դրա համար չպիտի վախենալ մահից:

Այս բոլորի հետ գտնում ենք շատ վերոջ ու կտրուկ կերպով արտահայտուած նաեւ այն միտքը, թե յերկու չարիքից փոքրագույնը պիտի ընտրել և թե մահն ավելի փոքր չարիք ե, քան մշտական տանջանքն ու զրկանքը: Ուստի ավելի լավ ե միանգամից մեռնել ու վռնչանալ, քան հրում ու ջրում տանջվիլ շարունակ:

Ի չափօգէ զերծեալ ի ձեռանէ ուրեմ՝ զնոստեակ զուով զնտին. և նորա զայրացեալ տակ. երթ կերակուր լիւ թոչնոց: Որում ասաց. Բաւական է ի կապճիդ ի հուր և ի ջուր տանջել. եւ պարզաբար կերակուր արեօծմա թոչնոց լինել:

Մտք տաակիս այս է. զի մշտց է ընդ տանջանս և ընդ տանջանս և ընդ զրկանս և ընդ զրկանս. յորոց եթէ պատահի, հարկաւոր է զանգաբառազոյնն ընտրել ի հզօրագունէն, և ի մեծամեծաց զփոքրագոյնս:


Մխ. ԽԳ. 46.


Այսպես և Ֆրիլը, թաթարներէից հայ ազգի կրած տառապանքները նկարագրելուց հետո, ասում ե, թե ավելի լավ ե հայերի համար ջնջվել ու մեռնել ու պրծնել, քան թե մշտապես չարչարվիլ:

Արդ եթէ չենք ինչ պիտանի,
նւ կամ չունինք դարձ ինչ բարի...
նա զու ջրնջէ՝ զմեզ մէկ հետի...

Վերջացնելով սոցիալական հարաբերութիւններէի այս տեսութիւնը լլխավորապես Մխիթար Գոշի առակներէի հիման վրա՝ կարծում եմ, թե պարզվից, վոր 12-րդ դարում Հալաստանում գոյութիւն և ունեցել աշխատավոր դասակարգի պայքարն ընդդէմ ազնւականութեան և յեկեղեցականութեան: Առաւելոր Մխիթարը, լինելով հոգևորականութեան նշանավոր անձնական բարեկամը, բնականաբար չպիտի ճշտութեամբ և ամբողջութեամբ տար այդ դասակարգային ուժի իրական ընդարձակ պատկերը: Բայց թե իրոք յեղել ե մի հեղափոխական շարժում, այդ շատ մեկին տեսնում ենք առակներէի մեջ: Պայքարող աշխատավորութեան գաղափարներն ու ձգտումները, սակայն, կազմակերպւած ձևով չեն յերևան գալիս: Աշխատավորները լինեն քաղաքացի թե շինական, արդեն յեկել են այն գիտակցութեան, վոր իրենք տանջուում են, իսկ ազնւականութիւնն ու հոգևորականութիւնը միայն վայելում են: Նրանք

դժգոհ են իրենց վիճակից, քննում են իշխանների արարքները, արտնջում են նրանցից, և վերջիվերջո ազնվականներին անպետք և ավելորդ ժանրաբեռնություն են համարում և նույն իսկ յերկիրն ավերողներ։ Մյուս կողմից՝ ինչքան ել հոգևորականությունը ջանում և մարդկանց մեջ կրոնամոլություն բուրրոքել և նույն իսկ նրանց զրգռել ընդդեմ այլակրոն «այլազգիների», բայց և այնպես հոգևորականներից ել դժգոհ են, նրանց ել պարսավում ու ծաղրում են։ Յեկեղեցու վերաբերմամբ անտարբերություն և յերևու առականների մեջ, և նույն իսկ նախապատվությունը մարմնին և տրվում և վոչ հոգուն։





②

34 - November 1

[504.]

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0566616

II
309 II